№ 77 ՇԱԲԱԹ, 16 ԱՊՐԻԼԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 16 ԱՊՐԻԼԻ № 77

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպեկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Ապրիլի 1-ից մինչեւ տարվայ վերջը 8 րուբլի:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրտով պատիւ ունի յայտնելու, որ վաղը, կիրակի, ապրիլի 17-ին, Վանքի մայր եկեղեցում կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ
ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆՑԻ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ:
367. 1—1

ԱՂԲԻՒՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ, ՏԱՐԱԶԻ խմբագրութիւնը, ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԸ և ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՕՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑԻՆ
ԳՈԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏԻ ՎՐԱ, տուն № 41 (Ցիրկի դիմաց), վերին յարկ:
տ. 30. 3—3

Կիրակի, ապրիլի 17-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳՈՒՄ Միքայէլեան փողոց,
ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
կայանալու է
ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ
հետեւեալ ծրագրով.
1) Մանկական երթ դրօշակներով, լապտերներով և ֆակելներով:
«ԳԱՐՈՒՆԸ ԳԱԼԻՍ Է»:
2) ԾԱՂՐ ԵՐԹ ՌԵԿԼԱՄՆԵՐԻ Թիֆլիսի կարիկատուրիստների, երգիծաբանական նկարներ օրվայ հարցերի առիթով: Լաւագոյն նկարների և սիւժէտների համար տրվում են պարգևներ:
3) ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ ԵՐԵՔ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ:
4) Մանկական հրավառութիւն, պտու-չվօ, օդակների նետում:
5) Զինւորական երաժշտութիւն: Մանդոլինիստների խումբ:
6) ՊԱՐԵՐ:
Մուտքն արժէ՝ երեխաների և աշակերտների համար 20 կ., հասակաւորներին 30 կ.: Մուտքի տոմսակները կարելի է գնել միմիայն Արտիստական Ընկ. այգում:
(Ն. Չ. Կ.) տ. 365. 3—2

Գոլովինսկի պր. ՑԻՐԿ-ՍՊՈՐՏ Այսօր, ապրիլի 16-ին, 6-րդ օր ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ԸՄԲՇԱՄԱՐՏԻ
ղեկավարութեամբ Ի. Վ. Լեբեդևի
ԱՅՍՕՐ ԿԸՄԲՇԱՄԱՐՏԵՆ 4 ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԶՈՅԳԵՐ:
Սկզբից կըմբշամարտեն աշխարհահռչակ երկու ըմբիշներ—«Սեն-Մասկան» և Ֆրից Շէյգեր-Միլլեր: Սինեմատօգրաֆի նոր ծրագիր: Այսօր մասնակցում է միսս Վօնչեստըր: Ազդ.—Այս օրերս տեղի կունենայ Թիֆլիսին լաւ ծանօթ Լավրով 5 եղբայրների և այլ արտիստների գեբիսը:
(տ.) 370. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գօլ. պր. 21, տուն Արտիստ. Ընկ., տելեֆօն № 355.
Պահեստում միշտ կան մեծ քանակութեամբ ընտիր պաստառներ ամենավերջին ոճերով
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր րուլօն:
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ:
(Ե. Չ.) տ. 207. 50—11

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ չղային հիւանդութիւնների
Ընդունելութիւնը ամեն օր (ցերեկվայ ժամը 12—1. (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէեվսկայա փող. № 22. Ելիզավէտինսկի փողոցից՝ № 44 տան անկիւն:
(տ. օ.) տ. 343. 100—5

Безспорно
лучшее
полосканіе
Одоль
Սրւակը 85 կ.
Մեծ սրւակը, մի քանի ամիս բաւականացող, 1 ր. 50 կ.:
(M. 74170/74189) 235. 1—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՐՑԸ

Կովկասեան համալսարանի հիմնադրութեան խնդրի առիթով գումարված խորհրդակցութեան միջոցին դարձեալ ընդգծվեց, որ ֆինանսական մասը շատ մեծ դեր պէտք է խաղայ համալսարանի բացման որոշումը արագացնելու գործում:

Ներկայումս Ռուսաստանի մի քանի տասնեակ քաղաքային ինքնավարութիւններ խնդրամատոյց են եղել կառավարութեանը՝ բանալու համալսարան իրանց քաղաքներում: Նրանց մէջ ամենախոշոր և լուրջ մրցակիցներ համարվում են Թիֆլիսը, Ռօստովը և Նիժնի-Նովգորոդը: Այդ քաղաքների ինքնավարութիւնները յատկացրել են համալսարանի համար գումարներ և հողեր, որոնք իրանց արժէքով անցնում են միլիօն րուբլուց: Միւս քաղաքները համեմատաբար քիչ են գումարներ տուել և եթէ նրանց յոյսը պէտք է կախված լինի ֆինանսական մրցութեան աջողութիւնից, այդ դէպքում նրանք ասպարէզից յետ կը մղվեն ներկայումս:

Կովկասեան համալսարանի խնդիրը կը քննվի առաջիկայ մայիս ամսին Պետերբուրգում յատուկ մի խորհրդակցութեան մէջ, որին կը մասնակցեն ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսօն ուրիշ մինիստրների և բարձրագոյն պաշտօնեաների հետ, այլ և Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան մի ներկայացուցիչը:

Այդ խորհրդակցութեան մէջ կովկասեան ներկայացուցիչը միայն այն ժամանակ կարող կը լինի հմուտ կերպով պաշտպանել դատը Թիֆլիսի օգտին, եթէ նրա ձեռքին կը լինեն վստահելի հաւաստիացումներ, թէ կովկասեան համալսարանին խոստացված բոլոր գումարները հաստատուն աւանդներ են և թէ կովկասեան ազգաբնակութիւնը կը հոգայ իր համալսարանի ապահովութեան և բարեկեցութեան մասին նաև առաջիկայում:

Դեռ շատ առևտրական և արդիւնագործական խոշոր ձեռնարկութիւնների վարչութիւններ և աչքի ընկնող շատ կրեսոսներ ոչինչ չեն յատկացրել կովկասեան համալսարանի օգտին, օրինակ Բագուի շրջաններում թէ հայերի և թէ մանաւանդ Թուրքերի և օտարերկրացիների մէջ: Նոյնը և ուրիշ քաղաքներում:

Եւ անշուշտ ցանկալի է, որ այդպիսի վարչութիւններ և անձեր շտապեն հէնց այժմ յայտնել իրանց մտադրեալ նուիրատուութիւնների մասին, որպէսզի աւելի եւս մեծ լինեն կովկասեան համալսարանին նպաստող տրամադրութիւնները:

Այդ պէտք է անել կարելին չափ շուտ: Եւ դա շատ կարևոր է գործի աջողութեան համար:

Սակայն կարծում ենք, որ չը պէտք է միայն ֆինանսական մասի նպաստաւոր վիճակ ստեղծելու հոգսով բաւականանալ: Անհրաժեշտ է յատուկ ուշադրութիւն դարձնել հարցի և մի քանի ուրիշ կողմերի վրա, որովհետև կովկասեան համալսարանի խնդիրը տարբերվում է ներքին նահանգներում համալսարաններ հիմնելու խնդրից նաև բացառիկ նկատումներով:

Կովկասը, իբրև ծայրերկիր, բնակված այլացեղ տարրերով, ծնեցնում է մայրաքաղաքի բարձր շրջաններում ուրիշ մտածողութիւններ այս ու այն կուլտուրական հիմնարկութեան հաստատութեան մասին: Այդ շրջանները մեծ նախապաշարմունքների մէջ են լինում և ղեկավարվելով սխալ միտումներով ու հաշիւներով՝ Թուլացնում են մեր երկրի բարենորոգչական գործունէութիւնը:

Եւ ահա պէտք է հոգատար լինել այդ նախապաշարմունքները հերքելու և վերացնելու:

Ս. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 ապրիլի

Պետերբուրգ.—Կանանց բժշկական ինստիտուտի պրոֆեսոր և վերատեսուչ Սալազկինը արձակվում է ինստիտուտում վարած պաշտօններից:

—

Օդեսսա.—Պրոֆ. Լէվաշէվը և պրիվատ-դոցենտ Ուսկովը պրոֆ. Էրլիխից ստացան շնորհակալական նամակ «606»-ը առաջին անգամ բծաւոր տիֆի դէմ գործադրելու համար, որ տուեց դրական հետեւանքներ:

—

Բելգրադ.—Հրատարակվեց պաշտօնական հաղորդագրութիւն, թէ աւստրո-ունգարական հաւատարմատարը յայտնեց արտաքին գործերի մինիստրին, որ Ֆրանց-Յովսէփ կայսրը տկարութեան պատճառով յետաձգում է սերբիական Թագաւորին ընդունելը, և յոյս յայտնեց, թէ այցելութիւնը կարող է տեղի ունենալ այս աշնանը: Ի պատասխանի արտաքին գործերի մինիստրը Թագաւորի և կառավարութեան անունից մեծ ցաւակցութիւն յայտնեց այցը յետաձգելու առիթով և մաղթեց կայսրին շուտով առողջանալ:

—

Կ. Պոլիս.—Սուլթանի Թագաւորութեան երկամեակի առիթով մայրաքաղաքը զարդարված է դրօշակներով: Բոսֆորը հրավառված է: Ազատութիւն ստացան ապստամբութեան համար դատապարտված 79 ալբանացիներ և Ադանայի ջարդի մէջ մեղադրվող 216 մահմեդական-զինւորներ:

Երէկվայ ճառի մէջ արտաքին գործերի մինիստրը Մայմոնի գործի առիթով մասնանշեց, որ մինիստրութեան մէջ ոչ մի վաւերաթուղթ չէ կորել: Մինիստրը ասաց, որ արաբ-ռուս սօկոլների համագումարը Պաղեստինում կազմակերպել է պաղեստինեան ընկերութիւն՝ անկախ ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնից:

—

Ցանժեր.—Բրէմօնը ապրիլի 8-ի զեկուցագրով յայտնում է, որ անկարելի եղաւ դէպի հիւսիս արշաւել ճահիճների պատճառով. 5,000 թշնամիներ յարձակում գործեցին երկու անգամ ապարդիւն: Ապրիլի 9-ին գրած նամակով Բրէմօնը հաղորդում է, որ Մանժէնի կարգադրութեամբ առաջ գնաց, ի նկատի ունենալով Ֆէց քաղաքին սպառնացող վտանգը: Զօրամասը յոգնել է և ունի 30 հիւանդներ: Շէրարդների շարժումը ուղղված է արտասահմանցիների դէմ: Ապրիլի 8-ի կռւում սպանվեցին 60 շէրարդներ:

Հաստատվում է Բրէմօնի դէպի Ֆէց վերադառնալու տեղեկութիւնը: Պատերազմական գործողութիւնները շարունակվում են:

—

Մադրիդ.—Հավասի գործակալութիւնը հերքում է արտասահմանեան լրագիրների տեղեկութիւնները, թէ իբր Սպանիան դիմեց և ստացաւ Բերլինի կառավարութիւնից երաշխաւորութիւններ սպանական շահերը Մարոկկոյում խախտվելու դէպքում:

—

Մանիլլա.—Իօլլօ կղզուց տեղեկացնում են, որ հօլլանդացիները գրաւեցին Պալմաս կղզին, իջեցնելով ամերիկական դրօշակը: Միացեալ-Նահանգները չը բողոքեցին, որովհետև կղզին նրանց համար արժէք չունի:

—

Հռոմ.—Պաշտօնական հացկերոյթին Վիկտոր-Էմմանուէլը և շվէդական Թագաւորը փոխանակեցին սրտագին բաժակաճառեր:

—

Վիեննա.—Կայսրը Ունգարիայում ապրելու է Գէդէլլէօում, այցելելով ժամանակ առ ժամանակ Բուդապեշտ՝ բժիշկների խորհրդի համաձայն:

—

Բուէնոս-Այրէս.—Նուէվա Պօմպէա, Ավէլլա, Նէգա քաղաքների խիտ բնակված մասերում ջուրը բարձրացել է երկու մետր: Շատ գիւղեր ջրի տակ են: Փլվող տների տակ մնացին շատ-շատերը. անապրուստների թիւը խոշոր է:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 2/15 ապրիլ

Հայերը, յոյները, ալբանացիները, բուլղարները, սերբերը և այլն «Միութիւն և Յառաջդիմութիւն» կուսակցութեանը թանկագին օժանդակութիւն մը մատուցին և ջերմապէս կուսակից էին այդ կուսակցութեան ամրապնդմանը և զարգացմանը:

Հիմա այդ տարրերը ընդդիմադիր դարձած են այդ կուսակցութեան՝ զանազան պատճառներով, որոնց մէջ առաջին և գլխաւոր տեղը կը բռնէ ազգայնականութիւնը, որ վտանգ կը սպառնար միւս ազգերու գոյութեան:

Ադանան, ուր Իթթիհադը արտայայտուեցաւ իբր անարդարութեան մարմնացում, հայերը զարշանքի զգացումով համակեց. Մակեդոնիոյ եկեղեցիներուն խնդիրը, յոյն ազգ. ժողովը սուիններով ցրուելու սպառնալիքը, և պատրիարքարանի առանձնաշնորհմանց դէմ մեթոդաւոր հալածանքը յոյները հմայաթափ ըրին. Ալբանիոյ մէջ կառավարութեան գործելու եղանակը, և ալբանացին իր հազարաւոր տարիներու վարժութենէն, զէնք կրելու իրաւունքէն զրկելու յանկարծական որոշումը՝ ալբանացին գործնականապէս ըմբոստացուց. Մակեդոնիոյ մէջ գործուած անմարդավայել խժդժութիւնները բուլղարները և սերբերը պաղեցուցին Թիւրք տարրէն և դարձեալ հին շրջանին պէս իրենք իրենց մէջ ամփոփուելով ընդհանուր վտանգին դէմ մաքառելու և կրաւորական ընդդիմադրութեան մը կուսակից դարձուցին:

Հետեւաբար յաջորդ տարուան մէջ ընտրական պայքարը բուռն պիտի ըլլայ և Թերևս առիթ՝ նոր քաղաքական յեղաշրջման մը, որ ամեն պարագայի մէջ դէպի աւելի լաւագոյնը ըլլալ չի խոստանար:

Սակայն մինչև այդ Թուականը մենք պարտաւորուած ենք ապրիլ արդի պայմաններուն մէջ, նոյն այս վտանգաւոր դրութեան մէջ, կաշկանդուած ու պրկուած ջիղերով, ամեն վայրկեան մտավախ ու յեղափոխական պայթումի մը սրտատրոփ սպասող:

Նշանները գէշ են, և կերևայ թէ այնքան գէշ, որ «Մ. և Յ.» կուսակցութիւնն իսկ երկիւղի մէջ է: Եւ ինչպէս երկիւղի մատնուած կառավարութիւն մը գէշ բռնաւոր մը կը դառնայ, այս կուսակցութիւնն ալ իր դիրքը կորսնցնելու երկիւղին առջև շփոթցած ու սարսափած՝ գէշ բռնաւոր մը դարձած է ու նեղսիրտ հակառակորդ մը, որ բնաւ չի հանդուրժեր քննադատութեան:

Իշխան Սաբահէդդին, որ կամաւոր աքսորի մէջ կապրի ի Պարիզ, այս օրերս Կ. Պոլսոյ մէջ հրատարակեց Թիւրքերէն տետրակ մը, որ կը պարունակէ կարգ մը բացնամակներ՝ ուղղուած «Մ. և Յ.» կոմիտէին: Սաբահէդդին այդ նամակներուն մէջ, առանց սևէ զրպարտութեան դիմելու, նոյն իսկ փաստերը քաղելով կոմիտէի օրգաններէն, գրական լեզուով մը, կատարեալ քաղաքավարութեամբ կը ներկայացնէ քննադատութեանց շարք մը, որ պէտք է ըսել Թէ որքան ճշմարիտ, այնքան ալ անհերքելի են՝ հիմնուած ըլլալով վաւերագիրներու և դէպքերու վրայ:

Այս գիրքը, հակառակ Կ. Պոլիս տպուած ըլլալուն և արձակ համարձակ վաճառուելուն, հայերէն Թերթերու մէջ գրախօսականներով և Թարգմանութիւններով ծանօթացուելուն, չգտնուեցաւ միակ Թիւրք Թերթ մը, որ համարձակէր նոյնիսկ յիշատակելու այս գիրքին անունը:

Պատասխան ալ տալու փորձ չըրին, հերքում տալու ալ չաշխատեցան: Խօսքը չըրին, վախնալով որ կը տարածուի և շատեր կը հասկնան... նշանակութիւնը կոմիտէին:

Անկեղծօրէն ինքնավստահ մարմին մը քննադատութենէն վատաբար վախնալու տեղ՝ քաջաբար կուրծք տալու առաքինութիւնը պիտի ունենար, մինչ կը տեսնենք, թէ «Մ. և Յ.» կոմիտէն իր քննադատները լռեցնելու կողմն է: Եւ Թիւրք մամուլը, ոչ նուազ վատ ու երկչոտ, կոմիտէին անհաճոյ դեր մը չկատարելու համար քաջութիւնը չունենար այսքան ուշագրաւ գիրքի մը համար իր կարծիքը յայտնելու:

Ուրեմն՝ կոմիտէն մտատանջ է իր գիրքին համար և կը ճնշէ մամուլը ի նպաստ իրեն:

Ահա ձեզի Թիւրքիոյ սահմանադրական ազատութեան սահմանը: Եւ այս բէժիմին համար է, որ վստահութիւն կը յայտնեն դիւանագէտները:

Ծիծաղելի միամտութիւն: Շառայլ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սաբզեվար, 20 մարտի

Ամսիս 19-ին այստեղ կախաղան հանեցին մի պարսկի, որը կրօնով սիւննի դաւանութեան է պատկանում. ամբողջ քաղաքի ժողովուրդը դուրս էր եկել նայելու:

Այդ պարսիկն ատրբաջանցի էր. այստեղ գալով մտադիր էր գնալ Մեշեդ և Խոր. քաղաքից մօտ քառասուն վերստի վրա պատահում է մի պարսիկ սէիդի (շիա), որին ճանաչում է. իր ասելով՝ այն սէիդն իր բարեկամներից մէկին սպանել է, ուստի ինքը նրա վրէժն առնում է և նրան սպանում:

Համաձայն կրօնական օրէնքի, որ մուսուլմանը պէտք է բաղնիս գնայ և մաքրի իրան, նա վերադառնում է քաղաք և գնում բաղնիս. բաղնիսից դուրս գալով մտնում է իր ծանօթ չայչու մօտ թէյ խմելու և իր յիմարութեամբ պատմում է իր արածները. չայչին յայտնում է ոստիկանութեան. գալիս են ու ձերբակալում:

Ամսիս 16-ին այստեղ եղանակները փոխվեցին, եկաւ անձրև, տեղ-տեղ կարկուտ, ձիւնախառն անձրև, սառնամանիք, որով փչացան մրգեղէնի այն ծառերն, որոնց ծաղիկները բացվել էին: Չը մոռանամ գրելու, որ ձմրան սաստիկ ցրտերի պատճառով ամբողջ Խորասանի նահանգի և Թուրշիզի կողմերի նռան և թզի ծառերը բոլորը ցուրտը տարել է: Գետնի հաւասար կտրում են ծառերը, որպէսզի նորից կանաչեն, պտուղ տան: Դա կը տևի մօտ երեք տարի:

Ոմն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՂՋՈՅՆ ՅՈԲԵԼԵԱՐԻՆ

25 տարիներ անընդհատ աշխատում է նա Ներսիսեան դպրոցում անաղմուկ, համեստ, ժրաջան։

Նա՝ մտքի և խօսքի կենդանի մեքենան, մի ուսուցիչ, որին Միսակ Ասիլեան են անուանում։

Իսկ թէ այդպիսի երկար ու ձիգ տարիների ընթացքում որքա՛ն արդիւնք է տուել այդ գործունեայ մեքենան, թող վկայեն նրա հարիւրաւոր 25 աշակերտներ, որոնք այսօր երախտագիտութեամբ են յիշում իրանց սիրելի ուսուցչին և բուռն բերկրանքով ողջունում են նրա քրտնաջան աշխատանքի յաղթական օրը։

Ես էլ բաղդ եմ ունեցել տարիներ շարունակ աշակերտել Միսակ Ասիլեանին։ Ներսիսեան դպրոցն ոտք դրած օրից մինչև աւարտելը ես տեսել եմ, լսել եմ հասակով կարճ, բայց հոգով շատ բարձր այդ մարդուն, որի առաքինութեան և բարեսրտութեան ցայտուն նշանները նրա հեզ աչքերն են կազմում ակնոցի տակից...

Խոստովանում եմ, բնութիւնից ես չափազանց չարաճճի էի։ Բայց առանձնապէս չարաճճիութիւն էի անում Ասիլեանի դասերին։ Յաճախ պատահում էր, որ կը մօտենար նա ինձ և ականջներս հայրաբար կը քաշէր։ Բայց հէնց որ նա հեռանում էր, ես դարձեալ իմն էի շարունակում։ Ի՞նչն էր արդեօք պատճառը այն անձնավստահութեան, այն համարձակութեան, որ կար իմ և գուցէ ուրիշ շատերի մէջ՝ աշակերտութեան երանելի օրերում։

Որովհետև մենք երկիւղ չունէինք Ասիլեանից, որովհետև նա բոլորի վրա թողնում էր ոչ թէ տեսպոտիկ ուսուցչի սառն ու պաշտօնական տպաւորութիւն, այլ ընդհակառակն, մի բարի հօր ազդեցութիւն, մի գուրգուրող խնամատարի տպաւորութիւն։ Նա ընկեր էր այս բառի իսկական իմաստով։

Ու քանի հետզհետէ զարգանում էի ես, գիտակից դառնում, այնքան աւելի կրկնապատկվում էր իմ և ընդհանուրի սէրը դէպի մեր հայր և ընկեր ուսուցիչը, իսկ վերջում այդ անկեղծ սիրոյն անբաժան միացաւ մինչև օրս էլ դպրոցի պատերից դուրս, կեանքի գոյութեան կռւում, մի վսեմ ու խորին յարգանք դէպի աշխատանքի աննկուն մարդը, դէպի դաստիարակ-ուսուցիչ Միսակ Ասիլեանը...

Ես երբէք չեմ մոռանայ Ասիլեանի այն ոգևորութիւնը, որով օժտված է նա իր մանկավարժական գործունէութեան մէջ։ Ասես, այս բոպէիս էլ կանգնած է իմ առաջ նա և դաս է պատմում այնպէս ոգևորութեամբ, այնպէս աշխոյժով, այնպէս կրակոտ։ Գուցէ քննադատելի լինի այն, ինչ որ ուսուցանում էր Ասիլեան, սակայն միշտ էլ յիշատակելի է նրա անչափ սէրը դէպի իր առանձնած առարկաները և դասաւանդելու ոգևորիչ շեշտը, նրա յափշտակիչ լեզուն...

Եւ այսօր, հայ ուսուցչի նահատակութեան այդ բուն տիպարը՝ Միսակ Ասիլեանը տօնում է իր գործի յաղթութեան տօնը, շրջապատված իր ընկեր ուսուցիչներով, իր բազմաթիւ սաներով, որոնք համակված են յարգանքի ու երախտիքի զգացմունքով և որոնք միաբերան բարեմաղթում են սրտաբուխ կերպով։

Այո, արժանի է Ասիլեան այսօրվայ հանդիսին, որին արձագանք են տալիս նաև հեռաւոր գաւառներից իր նախկին աշակերտները, որոնք սերմանում են իրանց ստացած լուսաւորութեան սերմերը։

Ճակատդ բարձր, հայեացքդ խրոխտ կանգնած ես դու, սիրելի ուսուցիչ, մերձաւորներիդ դէմ հանդիման և, գիտեմ, սիրտդ լի է ոգևորութեամբ, որ ուզում է պոռթկալ, անգամ արտասուեցնել...

Այդպէս է լինում, երբ արդիւնաւէտ աշխատանքը իր յաղթութեան երգն է երգում վստահ ու կորովի, երբ այդ աշխատանքի քաղցր պտուղները մի-մի անուշաբոյր վարդեր դարձած պսակել են պարթև ճակատդ...

Այսօր մի շարք սերունդներ կրթելու քո ազնիւ աշխատանքի շնորհապարտ ու անկեղծ յոբելեանն է կատարվում։

Կեցցէ յոբելեարը... Ս. Եսայեան

ՄԻՍԱԿ ԱՍԻԼԵԱՆԻ 25-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Ուսուցիչ։ Փնտռեցէք, քրքրեցէք համայն գրական աշխարհի բառարանները։ Կա՞յ արդեօք մի ուրիշ բառ, որ իր իմաստալից նշանակութեամբ, իր իդէալականութեամբ փոխարինէր «ուսուցիչ» բառին, իսկական ուսուցչին։ Տոկունութիւն, չարքաշութիւն, եռանդ, անդուլ աշխատանք, անհուն սէր՝ դէպի կոկոն-մանուկը, ապագայ մարդը, մի խօսքով՝ կեանքը՝ քաղցրութիւններով և դառնութիւններով լի։ Ուսուցիչն է, որ տիրապետում է ամբողջ մտաւոր աշխարհին իր սպառվող ուժերով։ Ուսուցիչն է, որ պատրաստում է մարդկութեանը բարեկիրթ անդամներ։ Ուսուցչին է պարտական և՛ ծնողը, և՛ զաւակը, և՛ հասարակութիւնը։ Որտեղ բացակայում է իսկական ուսուցիչը, այնտեղ կեանքը իր ամբողջ թշուառութեամբ է ներկայանում։

Ահա թէ ի՛նչ է ուսուցիչը բառի լայն իմաստով, որքան վսեմ մտքեր է պարունակում իր մէջ։

Այսօր անկեղծ սրտից ողջունում եմ քեզ, թանգագին ընկեր. 25 տարի սպառեցիր մտաւորդ, ֆիզիքականդ, սակայն խոնջացած ճակատդ պսակեցիր յաղթանակով։ Ջէ՞ որ ամբողջ մի սերունդ կրթել ես անյողդողդ կամքովդ. այսօր ճակատդ բաց, դէմ առ դէմ կանգնած ես այն մարդկանց, որոնք իրանց ստացածի փոխարէնը վերադարձնում են երախտագիտութեամբ։

Շնորհաւորում եմ քեզ, անկաշառ ընկեր. այսօր դու կը մոռանաս 25 տարվայ տանջանքներով հարուստ կեանքդ. այսօր կը զգաս, որ դու էլ ապրում ես։

Ցանկանում եմ, որ՝ ուժերդ վերանորոգած՝ երկար տարիներ օգտակար լինես սիրածդ տանը՝ իր աշխոյժ բնակիչներին—մանուկ սերնդին։ Սաթ. Զաքարեան

Իգդիր

ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Այսօր Թիֆլիսում տօնվում է Ներսիսեան դպրոցի ուսուցիչներից Միսակ Ասիլեանի մանկավարժական գործունէութեան 25-ամեայ յոբելեանը։

Մի կողմ թողնելով յոբելեարի բոլոր արժանիքները՝ ես այսօր ուզում եմ հրապարակով խոստովանել այն պարզ և մերկ ճշմարտութիւնը, որ Ասիլեանը՝ իր ուսումը վերջացնելուց յետոյ՝ չէ շլացել ոչ մի արտաքին դրաւիչ երևոյթներով և իրան նուիրել է նոր, մատաղ սերնդի կրթութեան, դաստիարակութեան գործին և ահա ամբողջ մի քառորդ դար նա հազարաւոր մանուկների աչքերն է բացել, լոյս է տուել նրանց և այդպիսով մարդիկ է պատրաստել կեանքի կռւի համար։

Կա՞յ, արդեօք, աւելի մի գաղափարական գործ, աւելի մի վեհ պաշտօն, քան կոյրի աչքը բանալը, կռւողի ձեռքը զէնք տալը և ոչինչ չիմացողին բան սովորեցնելը...

Ահա Մ. Ասիլեանը ամբողջ 25 տարի այդ վեհ պաշտօնն է կատարել Ներսիսեան դպրոցում և կատարել է վերին աստիճանի բարեխիղճ, պարտաճանաչ կերպով...

Նա սիրում, հետաքրքրվում էր և գիտէր իր առարկան...

Նա երբէք չէր ձանձրանում իր առարկան դասախօսելուց. ամէն տարի դուք տեսնում էիք նրան նոր թափով, նոր ոգևորութեամբ միևնոյն բանը կրկնելիս...

Բացի դրանից՝ Մ. Ասիլեանը իր համեստ ուժերը նուիրել է նաև մանկավարժական գրականութեանը և թարգմանել է «Հասկեր» մանկավարժական բաժնի համար գեղեցիկ գրուածքներ օտար գրականութիւնից։

Եւ ահա այդ աշխատաւոր, պարտաճանաչ մարդուն, այդ բարեխիղճ ուսուցչին և այդ յոգնած մտքին՝ այսօր Թիֆլիսում հրապարակական շնորհակալութիւն են ասում նրա ընկեր-ուսուցիչները, նրա աշակերտները և բարեկամները։

Ամենևին չեմ կասկածում, որ այսօր նոյնը անում են նաև Մ. Ասիլեանի հազարաւոր ցիրուցան եղած աշակերտները. նրանք, որոնք նրանից լոյսի, գեղեցկութեան, ճշմարտութեան գաղափարների առաջին թոթովանքներն են ստացել. նրանք այսօր անպայման յիշում են իրանց ուսուցչին, խոնարհում են նրա առաջ, սեղմում են նրա ձեռը, շնորհաւորում են և ասում.

«Յարգանք քեզ, պարտաճանաչ ուսուցիչ-յոբելեար...»։ Ս. քհն. Սալանեանց

Աստրախան

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՐՑԸ ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Հինգշաբթի, ապրիլի 14-ին, դումայի դահլիճում կայացաւ կովկասեան ապագայ համալսարանի մասին խորհրդակցութիւն, որին մասնակցում էին Կովկասի մի քանի քաղաքների, կրթական և կուլտուրական, արդիւնաբերական հաստատութիւնների և մամուլի ներկայացուցիչներ, նախագահութեամբ քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի։

Խորհրդակցութեան նպատակն էր պարզել մի քանի հանգամանքներ, որպէսզի Պետերբուրգում մայիս ամսին կայանալիք պաշտօնական խորհրդակցութեանը կարելի լինի ներկայացնել ճշգրիտ տեղեկութիւններ, թէ Կովկասը ի՛նչքան գումար կարող է տալ թէ միանուագ և թէ տարեկան՝ ապագայ համալսարանի բացման համար։

Ընտրված մասնաժողովի տուած զեկուցումից և մի քանի ներկայացուցիչների—Լ. Ղուլեան, Ալի-Մարդան-բէկ Թօփչիբաշեվ, Ժաւրուլի, Ստրոտոնօվ, Ա. Բաբեան, Խ. Աֆրիկեան, Ս. Սուլխանեան, Ալ. Քալանթար, իշխան Ալ. Արղութեան-Երկայնաբազուկ, իշխան Դիասամիձէ, և այլք—տուած բացատրութիւններից պարզվեցին հետևեալ հանգամանքները. 1) Թիֆլիսում համալսարանի երկու ֆակուլտէտ, այն է՝ ֆիզիկօ-մաթեմատիկական և իրաւագիտական, բանալու համար հարկաւոր է ունենալ միանուագ 1.300,000 րուբլի շինութեան համար, 455,000 րուբլի կահաւորման համար և պահպանութեան համար տարեկան 380,000 ր.։ 2) մինչև այժմ միանուագ նպաստներ խոստացված են զանազան հաստատութիւնների և քաղաքների կողմից, 1,491,500 րուբլի, իսկ տարեկան 57,300 ր., 3) խոստացված նպաստների մեծ մասը չէ կարելի համարել ապահով և մշտական, օրինակ՝ Բագուի նաւթարդիւնաբերողների ժողովի կողմից խոստացված տարեկ. 17,000 ր. չէ կարելի համարել ապահով, քանի որ օրէնսդրական եղանակով պէտք է սահմանել այդ նպաստը. 4) մինչև այժմ 5 տարվայ ընթացքում հաւաքվել է ընդամենը 27,000 րուբլի. 5) Թիֆլիս քաղաքի կողմից նուիրված 150 դեսեատին հողը կարելի է հէնց այժմ դրամի վերածել, ծախելով, և ստանալ ամենապակասը՝ 500,000 րուբլի. 6) առ այժմ հարկաւոր է, որ որոշապէս իմացվի, թէ Կովկասի ազգաբնակութիւնը ո՛րքան գումար է տալիս միանուագ ապահով կերպով և տարեկան ծախքերի ո՛ր մասն է իր վրա վերցնում. 7) հարցի վերջնական լուծումը կախված է Պետերբուրգի պաշտօնական խորհրդակցութիւնից, որ պէտք է քննէ 32 քաղաքների կողմից ստացված միջնորդութիւնները՝ իրանց քաղաքում բանալու համալսարանը կամ բարձր կրթական հաստատութիւնը՝ և որոշէ, թէ ո՛ր քաղաքին տալ նախամեծարութիւն։

Խորհրդակցութիւնը, լուսաբանելով մի քանիսը այդ կէտերից և որոշելով շնորհակալութիւն յայտնել Փոխարքային իր ցոյց տուած բարեացակամ վերաբերմունքի համար, որոշեց, որ մասնաժողովը աշխատէ պարզել մութ մնացած կէտերը և միջոցներ ձեռք առնէ, որ նուիրատուութիւնները աւելի մեծ ծաւալ ստանան։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ամենայն հայոց կաթողիկոսական գահի համար իբր ընտրելի ես առաջարկում եմ Մեսրոպ եպիսկոպոսին։

Ես առաջարկում եմ ահա թէ ի՛նչ հիման վրա։

Մինչև այժմ հրապարակի վրա չը յայտնըվեց մի այնպիսի անուն, որի շուրջը լինէր մի, երկու և ոչ թէ տասներկու կարծիք։

Չը կայ նրանցից մէկը, որ չունենայ այս և այն պակասութիւնը։ Պակասութիւն, որի առաջ կանգ է առնում ամենայն մի վճռականութիւն։

Մէկը թարմ է գլխով, բայց զուրկ է վարչական ոգուց։

Միւսը փորձված է և հմուտ, բայց արդէն ծերացած, մի ոտքը գերեզմանում, հետևապէս եռանդից զրկված։

Երրորդը... բայց ինչո՞ւ ընկնել կրկնութիւնների և երեքնութիւնների մէջ։

Անձնական փոքրիկ ծանօթութիւնից, զանազան էջմիածնական, ճեմարանական, հոգևոր, հասարակական և ընկերական լայն ծանօթութիւններից և այլ աղբիւրներից և վերջապէս լրագիրներից քաղած իմ տեղեկութիւնների վրա հիմնվելով, խղճի մտօք, առանց մի որևէ շահի, ակնկալի, և այլ և այլ ձևի ու ծուռ, նեղ կուսակցական և այլ զգացմունքներից դրդված լինելու ես եկել եմ այն խորին համոզման, որ արժանաւորութիւնների համեմատական տեսակէտից ընտրելի կարող է լինել և՛ սրբազան Մեսրոպ եպիսկոպոսը։

Նա արցախեցի է, և ե— —[illegible] շեշտում եմ և ընթերցողի լուրջ ուշադրութիւնը հրաւիրում եմ այդ բանի վրա, և համարում եմ այդ մի լաւագոյն առհաւատչեայ, որովհետև արցախեցին ընդհանրապէս լինում է տոկուն, հաստատակամ բնաւորութեան տէր, համբերատար և շինարար։

(Ինքս այդ երկրացի չեմ, բայց երկար ապրած լինելով արցախեցիների մէջ՝ վկայում եմ, որ այդ այդպէս է)։

Նա ունի ձեռք բերած բարձրագոյն գիտութիւն։

Նա երիտասարդ է և ֆիզիքապէս բոլորովին առողջ։

Յուսալի է, որ Մեսրոպ՝ իբր կաթողիկոս՝ կը վայելէ կառավարութեան ցանկալի հաւատը դէպի հայ ազգի հաւատարմական զգացմունքները, որը շատ անգամ ոտնատակ և անտես է առնված զանազան բաղդախնդիրների կողմից։

Վերջապէս նա տիրապետում է ռուսերէնին, որ, ինչպէս յայտնի է, նոյնպէս կարևոր մի պարագայ է։

Ինձ զարմացնում է, երբ մարդիկ, չը գիտեմ ինչ սուտ հաշիւներից դրդված, շատ անգամ կաշիներից են դուրս գալիս, որ մի ինքնահնար սուտ ասեն սրան-նրան անուանարկելու համար։

Մէկի թեկնածութիւնը պաշտպանելու և առաջ տանելու համար բնաւ կարիք չը կայ միւսներին վատաբանելու։

Ասում են, որ սրբազան Մեսրոպի գործունէութիւնը Գէորգեան ճեմարանում եղել է անփառունակ։

Հիանալի է. բայց ե՞րբ։

Այն ժամանակ, երբ մեր հասարակական կեանքի մէջ տիրում էր քաօս, անարխիա, երբ՝ մի խօսքով՝ մտքերի տէրը փողոցն էր, երբ հայրը որդու վրա էր գնում, որդին հօր, երբ աշակերտն էր հրամայողը և վիզը ծռած հրամանակատարը խեղճ ուսուցիչը,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԱՐՄԵՆՈՒՀԻ»

Դրամա 4 գործ., հեղ. Շիրվանզադէի
(«Գարուն» II գիրք)

«Արմենուհի» պիէսը լոյս տեսաւ «Գարուն» ալմանախի մէջ։ Որքան յիշում եմ, այդ պիէսի մասին միայն մի քանի ռեցենզիաներ են լոյս տեսել. ներկայացումից յետոյ, երբ մարդ աւելի տրամադրութեան ազդեցութեան տակ է խօսում, քան լուրջ անալիզից յետոյ։

Պիէսը սխալ է «դրամա» անուանված, որովհետև այնտեղ դրամա չը կայ։ Չը կան բուռն կրքերի ընդհարումներ։ Պիէսի մէջ բացակայում է նաև գործողութիւնը, և ամբողջովին հիւսված է դատողութիւններից։ Ուստի կարելի է կարծել, թէ հեղինակը որոշ (թէև արդէն հնացած) դիդակտիկ ձևով կամեցել է մի խոշոր կենսական խնդիր լուծել։

Մենք պարտաւոր ենք ուրեմն այդ տեսակէտից քննադատել պիէսը, թէև, կրկնում ենք, կօմպոզիցիայի կողմից գրուածքը մի պատմուածք է, որը պէտք էր պրօզայով գրել։ Ամենից առաջ այդպիսի մի պրօզայական գրուածքի, որը որոշ տենդենցիա է մտցնում կեանքի մէջ, պէտք է տենդենցիան պարզել և լուսաբանել ամէն կողմից։

«Արմենուհի» պիէսի մէջ տենդենցիան հետևեալն է, մեր կարծիքով։ Երբ մի ամուսնացած կին սիրեց մի մարդու (պիէսի մէջ նոյնպէս ամուսնացած), նա իրաւունք ունի թողնելու իր ամուսնուն և իր զաւակին ու երթալու իր սիրած մարդու ետևից (որը նոյնպէս թողնում է իր կնոջ և զաւակներին)։

Առ այժմ ես վերցնում եմ պիէսի այս կարդինալ դոգմը։ «Ես դէն գցեցի այն բռնակալական կապը, որ կոչվում է ամուսնութիւն»—ասում է Արմենուհին։ Այս դոգմը մի չափազանց խոշոր սկզբունք է. նա հերքում է ամուսնութիւնը, քարոզում է ազատ սիրոյ սկզբունքը. ուրեմն մի շատ լիբերալ պրօպագանդ, որ քանդում է մեր դարում տիրող մեշչանական հայեացքները ամուսնութեան մասին և—եթէ հեղինակը ծանօթ է այդ հարցին վերաբերեալ մեծ գրականութեանը—քանդում է նաև մեր ամբողջ սօցիալական կազմը։

Պարզ է, որ այնպիսի մի ահագին հասարակական ինստիտուտ, ինչպիսին է ամուսնութիւնը, քանդելուց յետոյ հեղինակը պիտի սօցիալական ռեֆօրմի մի ծրագիր ուրուագծէր մեզ, ինչպէս արել է օրինակ Բէլլամին։ Ամուսնական ինստիտուտը այդպէս յեղափոխելու համար պէտք էր որոշ հաստատուն հոգեբանական կամ սօցիալական մօտիվներ տալ։ Ուրիշ խօսքերով՝ նա պէտք է ցոյց տար, որ Արմենուհու և Սամսոնի համակեցութիւնը անհնար էր դարձել նրանց հոգեբանական աֆֆէկտների ընդհարման պատճառով, կամ ընկերվարական նորագոյն գործօնների շնորհիւ։ Ոչ մէկը և ոչ միւսը տեղի չունի պիէսի մէջ։

Ո՞րն է ուրեմն այն շարժառիթը, որը ստիպում է փափուկ սիրտ ունեցող, համբերող, բարոյական և առհասարակ համակրելի բնաւորութեան տէր Արմենուհուն յանկարծ թողնել իր հինգ տարվայ ամուսնուն, իր փոքրիկ երեխային ու փախչել կիսածանօթ, երկու անգամ միայն տեսած, Հմայեակի հետ։ Մասնաւոր ընտանեկան կեանքում ծայրայեղ ատելութիւնը և ֆիզիքական զարշանքը դէպի իր ամուսինը կարող էր դեռ ստիպել Արմենուհուն այդ քայլն անելու։ Այդ էլ չը կայ պիէսի մէջ։ Ընդհակառակը՝—Արմենուհին սիրում է իր ամուսնուն։ Սիրում է, որ համբերել է իր սկեսուրի ու տալի վայրենի վերաբերմանը դէպի ինքը։ Մի բացատրութեան միջոցին, թէև ինչ-որ դժբաղդութեան նախազգացում է լցված նրա սրտի մէջ, Արմենուհին ընկնում է ամուսնու վզովը, երբ սա հաւաստիացնում է, թէ սիրում է իրան։ Սէրը մեծ պիտի լինի, որպէսզի մի կին, որը կասկածներ ունի, մոռանայ կասկածմունքի խայթոցը և մի խօսքի վրա ընկնի ամուսնու գիրկը. «Ես հէնց այդ էի փափագում քեզնից լսելու»։ Ուրեմն և հաւատարմութիւն ունի դէպի նա, քանի որ նրա մի խօսքը ցրում է տանջող կասկածը։

Յիշած սցենան (I գործ. տեսիլ XIII) դրամայի առանցքը պէտք է համարել։ Այստեղ ընթերցողը սպասում է հերոսների հոգեբանական ընդհարումն տեսնել։ Բայց տեսիլը անմշակ և անխարակտերիստիկ է։ Ոչինչ չէ բնորոշվում. ընդհարում չը կայ. բախումներ չը կան։

Եթէ ամուսինները սիրում են միմեանց, եթէ Արմենուհու կասկածը, թէ ամուսինը իրան դաւաճանում է, ցրվում է սրա մի հաւաստիացումից, ուրեմն ի՞նչն է այդպէս յուզում Արմենուհուն։ Ահա թէ ինչ է կատարվում։

Ինչպէս յիշեցի, Արմենուհին ուզում է գրկել ամուսնուն, բայց տանը հիւրեր կան։ Սամսոնը յետ է քաշվում, վախենում է, թէ մի գուցէ հիւրերը նկատեն. անյարմար է։ Այդ բարկացնում է Արմենուհուն։ «Այս, վախեցա՜ր, բանականութիւնը խեղճ բողոքեց... Չես ուզում, որ քեզ թեթևամիտ մարդ համարեն։ Ո՛չ, բարեկամ, այդպէս չեն սիրում, սիրող մարդը այդպէս զգոյշ չի լինի... Գնա, ես քեզ համար կեանքի ընկերուհի չեմ, այլ ուրիշ բան...»։

Չափազանց միամիտ ու միանգամայն երեխայական հետևողութիւններ է անում Արմենուհին իր հինգ տարվայ համակեցութիւնից ամուսնու հետ. նա չէր կարողացել հասկանալ, թէ սիրում է իրան թէ ոչ։ Եւ յանկարծ այն փաստը, որ Սամսոնը քաշվում է հիւրերից ու չէ գրկում նրան, բացում է նրա աչքերը, որ ամուսնու «սիրտը հեռու է նրանից»։ Եւ արդէն վճռաբար յայտնում է. «Ես քեզ համար կեանքի ընկերուհի չեմ, այլ ուրիշ բան»։

Այս տեսիլի մէջ մենք տեսնում ենք, թէ ինչն է հիասթափեցրել Արմենուհուն։ «Ես քո հոգու և սրտի բաժինը (?) չեմ»,—ասում է։ Ինչո՞ւ և ինչ է ուզում ասել դրանով, այդ իրան Արմենուհուն պարզ չէ։ «Քո գլուխը լի է հաշիւներով, քո սիրտը կաշկանդված է քո գործերի ցանցով»։ «Դրանց սէրը դարձել է քեզ համար բռնակալ սէր և յափշտակել է քեզ իսկական կեանքից»։ Ո՞րն է իսկական կեանքը, չէ բացատրված։ Մի՞թէ այն, որ գիշերն էլ, ցերեկն էլ, մենակ էլ, հիւրերի մօտ էլ համբուրի իր կնոջը։ Մի փոքր ի շատէ խելացի կին չէ կարող պահանջել իր ամուսնուց, որ գործերով չը զբաղվի, կամ քիչ զբաղվի։ Այդ մօտիվը կարող է ուրեմն ապահարզանի առիթ դառնալ։ Յետոյ յանկարծ ասում է. «Ինձ սիրտ է հարկաւոր, վառվռուն, թրթռուն սիրտ, հարուստ հոգի, կեանք, հասկանում ես, կեանք»։ Նոյն անորոշութիւնը։ Ինքն էլ չը գիտէ, թէ ինչ է ուզում։ Կարծես մի 14 տարեկան գիմնազիստկա լինի։ Յետոյ աւելացնում է. «Թո՛ղ որ իմ տխմար երևակայութեամբ երջանկութեան օդային դղեակներ կառուցանեմ»։ Ո՞րն է նրա համար երջանկութիւնը։ Դարձեալ մութ։

Այսպիսով այս տեսարանը, որտեղ մենք պիտի տեսնէինք գոնէ, թէ ինչ իդէալներ են տոչորում Արմենուհու սիրտը, անբնորոշ, ոչինչ չը մեկնող մի սցենա է, որը մի բան է միայն ապացուցում մեզ, այն, որ Արմենուհին ո՛չ մի լուրջ մօտիվ չունի դժգոհ լինելու իր ամուսնուց։

Մի քիչ յետոյ (II գործ. տեսիլ VI) տեսնում ենք, որ այդ մութ «բացատրութիւնները», որոնք ոչինչ չը բացատրեցին, միանգամայն աւելորդ էին։ Այս տեսիլի մէջ մի քիչ կարծես պարզվում է, թէ ինչի՛ց է դժգոհ Արմենուհին. «Ա՛խ, այդ իրաւունքը տալիս է ինձ իմ սրտի պահանջը, իմ զգացմունքների անկախութիւնը (?), վերջապէս իմ սէրը դէպի քեզ։ Բաժանվենք մեր մերձաւորներից...»։ Ուրեմն նրան ճնշում էր սկեսուրի ու տալի ճիշդ որ անտանելի ներկայութիւնը։ Եւ այդ մտքին ամուսինը լիովին հաւանութիւն է տալիս։ Արմենուհին երջանիկ է. «Այժմ կարող եմ ասել, որ ես սկսում եմ ապրել, վերջապէս»։ Յետոյ համբուրվում է ու աւելացնում. «Գնա, ես քեզ կը սպասեմ ինչպէս սիրահարս»։ Այս տեսարանը միակ բնորոշն է։ Ամուսինները սիրում են միմեանց, Արմենուհին առանց սկեսուրի կը սկսի ապրել, և ոգևորված կէս ժամից յետոյ Սամսոնը կը գայ և կը վարվի իր կնոջ հետ՝ իբրև սիրահարի հետ։

Կարծես պարզ է։ Նախընթաց գործողութիւնները, իրանց կռիւներով ու դատարկաբանութիւններով աւելորդ էին. հէնց այս տեսիլից կարելի է սկսել պիէսը։

Բայց այստեղ մի միջնադէպ գալիս է միանգամայն տակն ու վրա անելու խեղճ, դիւրաթեք և անհամոզմունք Արմենուհու սիրտը։ Մի ճարտարապետ է երևացել, Հմայեակ, ամուսնացած, երկու երեխայի տէր։ Մի անգամ միայն տեսնելուց սիրահարվում է Արմենուհու վրա և հէնց իսկոյն վճռում է թողնել իր կնոջն ու երեխաներին ու փախչել հետը։ Նրա այժմեան կինը «մի զուարթ, կայտառ էակ էր, ընդունակ ոչ միայն մտածելու, այլ և զգալու։ Երգում էր, պարում էր, թռչկոտում։ Եւ նուագում էր։ Լաւ էր նուագում թէ վատ՝ նա չը գիտէր, բայց զգացվում էր (ինչ, յայտնի չէ), որովհետև նրա հոգին ունէր միշտ զգացվելու պահանջ (?), ինչպէս մանուկն ունի լալու պահանջ»։ «Օրիորդը հետաքրքրվում է բոլորով (ուզում է ասել՝ այն ամենով), ինչ որ գեղեցիկ է, ինչ որ բանաստեղծական է, ինչ որ զատում է մարդուն անասունից, ինչ որ մաքրում, բիւրեղացնում է նրա հոգին»։ Բայց այդ միայն ցուցականորէն. ի ներքուստ՝ օրիորդը մի «դև» էր։ «Հէնց որ կին դարձաւ, հէնց որ ստացաւ հօրից օժիտը, հէնց որ ազատեց իր հոգին կապանքներից, նա դարձաւ այն, ինչ որ էր էապէս»։

Ուրեմն պարզ է, որ այդ մի կտոր աղջիկը ճիշդ որ դև է, խեղճ համալսարանականի աչքերը կուրացրել էր, որ ամուսնանայ։ Թէև հարց է ծագում, թէ ինչպէ՞ս այդչափ խորամանկ մի աղջիկ չէ նկատել, որ իր փեսացուն շատ յիմար մարդ է, որ այդպէս հեշտ խաբվում է։ Հասկանալի չէ նոյնպէս, թէ ինչո՞վ գրաւվեց այդ աղջիկը, քանի որ չէր էլ սիրում Հմայեակին։ Այդքան մեծ օժիտով մի աղջիկ կարող էր ընտրութիւն անել և մէկին սիրելով առնել... վերջապէս՝ ամուսնանալուց յետոյ «այդ կնոջ գրքերը փոխարինվեցին հօրից ստացած տոկոսաբեր թղթերով (ասում են թղթերի), գաղափարները (երևի իդէալները է ուզում ասել) հաշւի տետրակներով, և նրա ճաշակը, թեթև թռիչներից յետոյ, գնաց թառ եղաւ թանկագին գլխարկների վրա» (այս ալեգորիա է. ուզում է ասել թէ նրա գեղարուեստական ճաշակը արտայայտվում էր միայն հագուստեղէն ընտրելու մէջ, կամ դրա նման մի բան)։

Տեսէք այս զարմանալի զուգադիպութիւնը։ Արմենուհու ամուսինը ևս տոկոսաբեր թղթերով է զբաղված, նոյնպէս ակցիաներ է կարդում և այլն։ Սամսոնն ու տիկին Հմայեակը (Սիրանոյշը) միանգամայն նման տիպեր են։ Ոչ պակաս զարմանալի նման են և Արմենուհին ու Հմայեակը այդպիսի մի ժամանակ այնքանն էլ շատ է և բաւական, եթէ մշտական ատենանակը կամ ֆիննական դանակը գրպանում կրող աշակերտը ուսուցչի անմեղ արիւնը չի թափել և թերևս ճեմարանն էլ կործանել և մայր տաճարն էլ հետը։

Ահա այդ բոլորին հետևելով, այդ բոլորը ծանր ու թեթև անելով, ես եկայ այն խորին համոզման, որ մեր ներկայ հոգևորականութեան մէջ հայոց կաթողիկոսութեան թեկնածու կարող է լինել Մեսրոպ եպիսկոպոսը։

Սանատրուկ

—

«Մշակը», որի կարծիքը կաթողիկոսական ընտրութեան խնդրում մեծ դեր է խաղալու, դժբաղդաբար մինչև հիմա դեռ չէ տուել իր թեկնածուի անունը։ Մոսկվայում այդ հարցով զբաղվողներից մի երկուսի հետ ունեցած խօսակցութեան տպաւորութեան տակ, այժմ ինձ հասկանալի է դարձել «Մշակի» թեկնածուի անունն չը տալու գլխաւոր պատճառը, այն է՝ «ներկայ մեր եպիսկոպոսների շարքում չը կայ մէկը, որը օժտած լինի այն առաւելութիւնների մինիմումով, որոնք անհրաժեշտ են հայ եկեղեցու հոգևոր պետ դառնալու, որպէսզի կարելի լինի յանձնել նրան կաթողիկոսական գահը»։

Բաթումից Յ. Մեղաւորեանը իր գործնական յօդուածներով մի աշխարհականի կաթողիկոսացնելը գտնում է իրագործելի և ոչ ընդդէմ «Պօլօժենիէի»։ Եթէ այդ իրաւացի է, այն ժամանակ հարցը փրկված է, և կաթողիկոսական գահը մի արժանաւոր անձնաւորութիւն բարձրացնելու բոլոր յարմարութիւնները ունենք։

Կաթողիկոսից ինչ է պահանջվում. պահանջվում է, որ նա լինի գլխաւորապէս հայագէտ, ուսագէտ, օրէնսգէտ, եկեղեցագէտ։ Այդպիսի առաւելութիւններ ունեցողներ կը գտնվեն աշխարհականների մէջ, օրինակ Ս. Մամիկոնեան և Գր. Չալխուշեան։

Յայտնի բան է, աշխարհականների շարքում Գ. Չալխուշեանը և Ս. Մամիկոնեանը բացառութիւններ չեն, գուցէ նոյնիսկ կան և աւելի յարմար թեկնածուներ, որոնց անունները հրապարակի վրա բերողը այսպէս թէ այնպէս ընտրութեան գործին նպաստած կը լինի։

Գրիգոր Պօղոսեան

Նիժնի-Նովգորոդ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Վտանգաւոր դրութիւն

Ղափան, 3 ապրիլ

Ինչպէս ամեն տեղ, մեզանում էլ ձմեռը այս տարի երկարատևութեամբ և խստութեամբ աւերիչ հետևանք ունեցաւ։ Գիւղացին յանկարծակի եկաւ, երբ տեսաւ իրան կանգնած մի այսպիսի անսպասելի ձմրան առաջ։

Սովորական տարիների եղանակները ի նկատի ունեցած՝ գիւղացին հաւաքել էր իր տաւարի պաշարը, բայց երբ նրա առջև կանգնեց 5 ամիս ձմեռը, երբ տաւարը 5 ամիս շարունակ փակվեց գոմում, լոյսի երես չը տեսաւ, ինչ էր լինելու առանց այդ էլ մեր գիւղացու ողորմելի անասնապահութիւնը. անասունները կատարեալ քաղցից լղարած, ոսկոր ու կաշի դարձած՝ հազիւ են կարողանում ոտքի կանգնել։ Ո՞ւր գնայ գիւղացին, ումից դարման խնդրի. ընդհանուր է կարիքը. իր սուր ճանկերում սեղմել է մի մեծ շրջան—ամբողջ Զանգեզուրը. պարապ վերցրած փողը ձեռքերին՝ գիւղացիները թափառում են գիւղից գիւղ ու դատարկաձեռն ետ դառնում, ճարները կտրած, աչքները երկինք յառած նախախնամութեան գթութիւնն աղերսում։ Դարմանի պուդը ծախվում է 1 ր. 20 կ.—1 ր. 30 կ.։ Փող չը կայ, տաւարն էլ լղար է, չէ ծախվում, որ մի երկուսը ծախի, միւսը պահի թէկուզ թանգ գնով։ Էլ ծառ չը մնաց, որ ճղնակտոր արված չը լինի տաւարին տալու համար։ Սարսափում է մարդ, երբ տեսնում է անասուններին ծառերի հաստ ճիւղերը կրծելիս, կամ մի տանից մի օրում երկու երեք տաւարի լէշ դուրս քաշելիս, հովիւը ոչխարանոցից մահակն ուսին դատարկ վերադառնալիս. տեսարաններ՝ մէկը միւսից աղեկտուր, մէկը միւսից ցաւալի։ «Ի՞նչպէս է ձեր տաւարը, քանիսը կոտորվեց, ծրտեղից էք դարման ճարում։ Աւերվեցինք, աղպէր, փչացանք այս տարի»,—խորն հառաչանքով հարցնում են միմեանց, կամ տարբեր գիւղերի գիւղացիները միմեանց պատահելիս։ Եղել են դէպքեր, որ ձմրան միջին, երբ դեռ հացի կարիքը այնքան ուժեղ կերպով չէր բաղխում գիւղացու խրճիթը, այլ գիւղացու գլխաւոր հոգսը դարմանի պակասութիւնն էր, նա իր երեխաների բերանից պատառը կխլում տալիս էր տաւարին. ցորենով և գարով էին կերակրում տաւարին, չը նայած որ մի քանի օրից յետոյ հացի պակասութիւն էին զգալու։

Այժմ, երբ գարունն է սկսվում, երբ դարմանի պարգը որոշ չափով թեթևանում է, գիւղացու առաջ ծառացած է գարնանացանքսի և հացի պակասութիւնը։ Չը կայ սերմացու, չը կայ և լծկան. ուրեմն զգալի չափով պակաս է գարնանացանքսը. միւս կողմից եղանակների անբնականութիւնը վնասել է և աշնանացանքսին. գանգատվում են գիւղացիները, որ աշնանացանքսը ձմեռվայ խիստ ցրտերից ցրտահար է եղել։ Հացի գինը արագ կերպով բարձրանում է. ցորենի պուդը 2 ր. 50 կ., գարինը 2 ր., պարզ է, որ առաջիկայում մինչև նորը դեռ բարձրանալու է, որովհետև կանօնաւոր հաղորդակցութեան բացակայութիւնը, հարևրաւոր վերստեր երկաթուղագծից հեռու գտնվելը հացի ներմուծումը անհնարին են դարձնում ճանապարհածախսի մեծաքանակ լինելով։

Ընդհանուր աղքատութիւնը թափառաշրջիկ է դարձրել խեղճ գիւղացուն՝ մի-մի ցեց դարձած վաշխառուների գոհը, որոնք «մեծ բարերարի» անուան տակ ծծում են արիւնքամ գիւղացու վերջին կաթիլը, որոնք օգտվելով կարիքի այսչափ մեծութիւնից՝ սոսկալի տոկոսներով, որ ասելն անգամ մարդ ամաչում է, փող կամ հաց են տալիս անթիւ աղերսողներից մի քանիսին, ի հարկէ, որոնք աւելի բարձր տոկոս են խոստանում, 300—400%. իսկ տներում, էլ իր չը մնաց, որ շուկայ դուրս չը գար և ամենաողորմելի գնով չը ծախվէր կամ բաւական չընկնէր այս կամ այն հարուստի մօտ $^1/_4$—$^1/_8$ արժէքագնով։ Եւ վերջն էլ նրա տուած փողի տոկոսի տեղ սեփականութիւն դառնար։

Սրա վրա աւելացրած զարմանալի հարկերի և զանազան հասարակական ծախսերի հաւաքումը, որ վերջինները կարելի է ասել կրկնապատկված է այս տարի, պարզվում է այն ծանր և վտանգաւոր դրութիւնը, որի մէջ ապրում է մեր գիւղացին։ Վտանգաւոր է դրութիւնը, որովհետև նա քայքայվում է անուղղելի կերպով։

Արագս

ԲԱԳՒԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ *)

Յանկարծ երևաց Թաղիևը. նրան շրջապատեցին մի քանի ձայնաւորներ, որոնք նստոտած էին քաղաքագլխի շուրջը, և խնդրեցին քուէարկելու համաձայնութիւն տալ Հաջինսկին (ոչ Հաջիևը), դիմելով քաղաքագլխին յայտարարեց, որ եթէ յարգելի Հաջին հրաժարվի քուէարկվելուց, այն ժամանակ թէ ինքը և թէ իր հետ շատերը նոյնպէս պիտի հրաժարվեն։ Նորից լսվեցին ձայներ՝ «просимъ», «просимъ»։ Մինչ այդ հարցի պարզաբանելը, շտապեց Թաղիևը ինքը խօսել։

«Պարոններ,—ասաց նա,—ես 30 տարի աշխատել եմ քաղաքի օգտին. լաւ թէ վատ՝ ես արել եմ, որքան կարողացել եմ. այժմ ես յոգնած եմ, ընտրեցէք աւելի թարմ և մաքուր մարդիկ, որոնք կարողանան մաքուր տանել քաղաքային մեծ գործը»։

Նորից սկսվեցին «просимъ»-ները։

— Շատ լաւ,—ասաց Թաղիևը շտապելով,—ես չեմ կարող մերժել և համաձայնվում եմ։

Այդ ժամանակ դահլիճ մտաւ «Баку»-ի խմբագիր Խ. Ա. Վերմիշեանը։ Վերջինս թեկնածուների շարքումն է եղել, բայց աւելի խելօք լինելով հրաժարվել էր և չէր եկել ընտրութեան. բայց մի խումբ մարդիկ, գլուխ ունենալով Յակոբ Տէր-Յովհաննիսեանին, հեռախօսով պահանջել էին, հակառակ դէպքում՝ ույժով բերելու քաղ. տուն։ Վերմիշեանին շրջապատեցին ընտրողները և բժիշկ Զաքարեանի և Կ. Խատիսեանի միջնորդութեամբ համաձայնեցրին հրաժարականը յետ վերցնելու։

Ուղիղ ժամը 1-ին սկսվեց քուէարկութիւնը օրինաւոր կարգապահութեամբ, և պիտի խոստովանվել, որ քաղաքագլուխ Բաևսկին շատ օրինաւոր վերաբերմունք ցոյց տուեց ինչպէս քուէարկելու ժամանակ, նոյնպէս և ստուգելու։ Ահա այդ ժամանակ դահլիճում նորից սկսվեց «պրօպագանդան» ընտրողների մէջ։

Ամբողջ քաղաքի ընտրողներից ներկայ էին միայն 1357 հոգի, որոնք և պիտի ընտրէին թէ ձայնաւորներ և թէ թեկնածուներ։

Սկսվեց ընտրութիւնը, ինչպէս ասացի, ժամը 1-ին ցերեկվայ, և վերջացաւ գիշերվայ ժամը 12-ին։

Տուփերը ստուգելու համար նշանակված էր առանձին յանձնախումբ, որի եռեի կողմում ժողոված էր հետաքրքրվող հասարակութիւնը, իսկ ներսում քաղաքի աչքի ընկնող ձայնաւորները, ընդհանուր ոստիկանապետը և լրագիրների աշխատակիցները։ Հայ լրագրութեան կողմից պաշտօնապէս ընդունվեց քաղաքագլխի և վարչութեան անդամների կողմից «Մշակի» թղթակիցը և ազատ մուտքի համար ստացաւ պաշտօնական գրութիւն։

Քուէարկութիւնը ցոյց տուեց, որ ընտրված կարող են լինել և օրինաւոր ճանաչվել ընտրողների կէսից աւելի ձայն ստացողները. ուրեմն ընտրվում է նա, ով ստացել է 678 ձայնից աւելի. իսկ այդպիսիներ կային 12 թուրքեր, ութը զանազան ազգից—ռուս, վրացի, մկրտված հրէայ, գերմանացի և երկու հայ։

Ընտրելու դեռ մնում են 58 ձայնաւոր և 16 թեկնածուներ։

Եթէ ընթերցողները ուշադրութիւն դարձնեն քուէարկված, բայց սևացած հայերի վրա, կը տեսնեն, որ բոլորն էլ կրթված, համալսարանական, եւրօպացու յատկութեամբ տոգորված մարդիկ են, ինչպէս օրինակ Ա. Վաչեան, Ս. Ս. Թառումեան, Բ. Վէրմիշեան, բժ. Զաքարեան, Ան. Քալանթար, Վ. Երիցեան, Հ. Տէր-Միքայէլեան, Ս. Թաղիանոսեան Կ. Խատիսեան և այլք. դրանք Բագուի աչքն են. տեխնիքական, ֆինանսական և այլ ճիւղերի մէջ ոչ միայն մի քաղաք կառավարելու, այլ աւելի մեծամեծ գործերի ղեկավարներ կարող են լինել. բայց այսօր սև քուէ են ստանում... Իսկ եթէ քուէարկված թուրքերին սկսէք աչքի անցկացնել, նախ՝ պետական լեզուն չը գիտեն, երկրորդ՝ բառի բուն նշանակութեամբ տգէտ. հազիւ լինի մէկը կամ երկուսը կրթված։

Եւ դրանք պիտի կառավարեն հարուստ Բագուն։

Այժմ հարց է առաջ գալիս, թէ արդեօք 58 ձայնաւորներ և 16 թեկնածուներ ընտրելու ժամանակ կարելի է սևացած քուէարկվածների տուփերը նորից դնել, թէ ոչ։

Եթէ չէ, նշանակում է մենք պիտի այս անգամ երեսներս դարձնենք դէպի Բալախանի, Բիբի-Հէյբաթ և Սև-քաղաք՝ հրաւիրելու մի շարք համալսարանական պարոններ, միայն առանց բլօկի օտարների հետ, որովհետև մի անգամ ևս ապացուցվեց, որ հայը, շնորհիւ իր չը չափած հաւատի, շարունակ խաբվում է։

Ս. Գարագաշ

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ

«Մշակի» անցեալ տարվայ համարներից մէկի «Ներքին լուրերի» բաժնում զետեղված էր այն բանի մասին, որ Պետերբուրգում խօսակցութեան նիւթ է դարձել «Նադել» հողերի յետ գնման հարցի խնդիրը, և բացի այդ ասված էր, որ Ջրովի հողի մի դեսեատինի գինը այնտեղ, Պետերբուրգում, երեսուն րուբլու վրա է խօսվում, իսկ կալուածատէրերը միջնորդում են, որպէսզի հողերը արդարացի գնահատվեն, այսինքն էժան չը գնահատվեն։

Գիւղացիները բաւական ուրախացան, որ վերջապէս հասել է մի այնպիսի ժամանակ, որ իրանք բնաւ բէկեր չեն ճանաչելու։

Ի նկատի ունենալով այն բոլոր տարաձայնութիւնները, որոնք միշտ տեղի են ունենում ժողովրդի ու բէկերի (կալուածատէրերի) միջև, ուստի այդ տարաձայնութիւններին, թիւրիմացութիւններին վերջ տալու համար՝ բարի միտք յղացաւ, յետ գնման միջոցով ազատել ժողովրդին իր ծանր վիճակից։

Աչքի չընկնող կալուածատէրերը, իրանց չունեւորութեան պատճառով, աշխատելով իրանց բոլոր պակասութիւնները հոգալ կալուածքի եկամուտներից, տարէ-տարի աւելացնում են տասանորդի քանակութիւնը։ Գիւղացիները, ըստ «ուստավնայա գրամոտայի», պարտաւոր են ստացած մթերքների (ցորենի, գարու, կորեկի, գինու, խնձորի և այլոց) մի տասնորդական մասը հանել կալուածատիրոջ համար, սակայն նրանք դժուարանալով ամեն մի մթերքից անդադար բաժիններ հանել բէկերին և, բացի այդ, նրանք կամենալով խոյս տալ այն թիւրիմացութիւններից ու տարաձայնութիւններից, որոնք միշտ տեղի են ունենում այդպիսի սիստեմով տասանորդները ժողովելու դէպքում, խոստանում են բէկերին, բացի հացահատիկներից, մնացածի տասանորդը փողով վճարել, ուստի օգոստոս ամսում բէկերը տանուտէրի կամ վերջինիս օգնականի և գիւղի մի քանի «քեանդխուդա աղսախկալների» հետ (որոնց նախօրէն տեսած են լինում) շրջելով այգիները, մարգագետինները կամ խոտհարքներն ու բանջարանոցները (огородъ), իբր թէ մօտաւորապէս որոշում են, թէ այգին, խոտհարքը և այլն այդ տարին ինչքան օգուտ կը լինեն տուած իրանց տիրոջը, և համաձայն այդ որոշման նշանակում են կամ ցուցակագրում տասանորդի քանակութիւնը։ Եւ հետևանքը այն է եղել, որ ժամանակով աւելացել է տասանորդի քանակութիւնը։ Օրինակ՝ մի այգու տասանորդը, որ մի տարի գրվել է 2 րուբլի, միւս տարին գրվում է 4 րուբլի, երրորդ տարին 5—6 րուբլի և այլն, չը նայած որ այգին միևնոյն այգին է, նրա միջի ծառերը միևնոյնն են, և նա տալիս է համարեա մի տեսակ բերք։ Ուրանալի չէ, որ կան այնպիսի այգիներ, որոնք մի տարի պակաս բերք են բերում, իսկ միւս տարին առատ. համարեա ընդմիշտ այդ այգու բերքը այդպէս է լինում։ Եւ թող այդպիսի այգու տասանորդը գրվի՝ մի տարին (պակաս բերք բերած տարին), ենթադրենք, 3 րուբլի, իսկ միւս տարին (առատ տարին) 5—6 ր., և միշտ տասանորդի վճարելը շարունակվի այդ եղանակով. այն ժամանակ ոչ մի թիւրիմացութիւն չէ կարող ծագել գիւղացիների ու բէկերի միջև։ Դժբաղդաբար ամեն անգամ արդարութիւնը չէ դեր խաղացողը։

Արդէն ժամանակ է՝ գիւղական համայնքը ազատելու «ВЫКУПЪ»-ի միջոցով։

Գիւղական ժողովուրդը, թէկուզ էլ սակաւահող է, այնուամենայնիւ ցանկանում է

---

*) Տես «Մշակ» № 76.

(տ. տեսիլ III գործ. II)։ Շատ հեռաւոր ժամանակների շունչ է փչում այս շարլօն հիւսուածքից, երբ փնտռում էին երկու միանման տիպեր և միացնում նրանց ռոմանտիկ սիրոյ կապով։

Սակայն այդ բոլորը ոչինչ, եթէ միայն նրա դաշնամուրը «փոշի չը պատէր»։ Այդ նշանակում է, թէ կինը դադարեց նուագելուց։ Այդ «ամենից ողբալին էր», և «այն մարդը, որ պաշտում էր երաժշտութիւնը իբրև երկրորդ Աստուած ճարտարապետութիւնից յետոյ, այլ ես բաղդ չունեցաւ սքանչելի վալսը լսելու»։ Այս այն վալսն էր, որի նուագելու միջոցին պարոնը առաջարկութիւն էր արել իր կնոջը և որը (զարմանալի զուգադիպութիւն) պիտի նուագէր այս բոպէիս Արմենուհին։ Մի ուրիշը պիտի առէր այդ վալսը, որը այդչափ անբաղդութեան պատճառն էր եղել։

Այդ վալսի հնչիւնները պիտի ցնցէին նրա գոյութիւնը։ Իսկ այդ պարոնը վալսի հնչիւնների դաղարումն «ամենից դառն, ամենից ողբալին է համարում»։ Առանձին հոգեբանութեան տէր մարդ է։ Եւ հակասական են նրա զգացմունքները։ Նա խոստովանվեց, որ չը գիտէր, թէ օրիորդը լաւ էր նուագում թէ վատ, ուրեմն պրօֆան էր մուզիկայի մէջ (և այդ բոլորովին պիտի դուր գար Շիրվանզադէին, քանի որ նա այն թէօրիան է քարոզում, թէ ճարտարապետը չէ կարող գեղարուեստ հասկանալ)։ Էլ ինչ նշանակութիւն կարող էր ունենալ նրա համար այդ չնչին հանգամանքը։

Վերջապէս այդ մարդը յայտնում է Արմենուհուն (որին երկրորդ անգամն է տեսնում), թէ «այլևս ոչ ոք և ոչինչ չէ կարող նրանց բաժանել... նոյն իսկ սուրբ համարված պարտականութիւնները»... Եւ խեղճ Արմենուհին նայիվ կերպով հարցնում է. «Այսպէ՞ս է արդեօք»։

Այս է Արմենուհու և Հմայեակի հոգեբանութիւնը։ Այդ է և հեղինակի բարոյական խրատը, որ տալիս է բեմից՝ այդչափ ապլօմբով կամ միամտութեամբ։

Մինչև այժմ Արմենուհին դեռ չը գիտէ, թէ ամուսինը սիրուհի ունի։ Նրա աչքերը բանալու պարտականութիւնը Արմենուհու հօր վրա էր ընկել։ Տարօրինակ դեր է կատարում այդ պօլկօվնիկը և տարօրինակ մտքեր յայտնում։

Վերջապէս Արմենուհին իմացաւ, որ ամուսինը դաւաճանում է իրան։

Տեսնենք ինչ ձևով է հակազդում։ Ամենից առաջ փակում է իր դռները ամուսնու առաջ և ասում է՝ «Ես կը բացատրեմ»։

Եւ չէ բացատրում։ Սակայն 3-դ գործ. XIV տեսիլի մէջ Արմենուհին յայտնում է նրան իր վերջնական որոշումը։ Սամսոնը ներումն է խնդրում, որ սիրուհի ունի, նոյն իսկ թոյլ է տալիս (այդ վայրենի մարդը), որ Հմայեակը յաճախի իրանց տունը։ Խեղճ մարդը տանջվում է, զղջում է, գործերը բարձի-թողի է արել, անքուն գիշերներ է անցկացնում. կրկնում է, որ կինը թանգ է իրան և այլն։ Բայց Արմենուհին միայն ծիծաղում է ու յայտնում իր հետևեալ որոշումը. «Մենք կը մնանք միևնոյն յարկի տակ մեր զաւակի համար, բայց կապրենք ինչպէս օտարներ»։

Սամսոնը հասկանում է թէ ինչ ասել է այդ բանը։ Հարց է տալիս՝ «արդեօք այդ յամառութեան հիմքը իմ անհաւատարմութիւնն է, թէ մի ուրիշ, աւելի խոշոր պատճառ», այսինքն այն, որ Արմենուհին սիրում է Հմայեակին։

Հարցը կատեգորիկ պատասխան է պահանջում։ Բայց այդ ողորմելի անգոյն կինը ինքն էլ չը գիտէ կամ գիտէ և չէ վստահանում պատասխանել։ «Ձեզ ինչ»,—ասում է միայն։ Դուրս է գալիս, որ հաւասարութիւն է։ Ամուսինը սիրուհի ունի, ինքն էլ կարող է սիրական ունենալ։ Սամսոնը կատաղում է։ Սակայն Արմ. չէ ուզում իր տան մէջ սիրեկանին ֆիզիկական սէր տալ, որովհետև՝ «ինձ համար կարևորը սէրն է, որին այնքան կարօտում էի. այժմ ես սիրած եմ և սիրված, այսքանը բաւական է ինձ»։ Թէ ինչպէս է ուզում սիրել՝ դա գաղտնի է։ Գուցէ իդէալական սիրով։ «Անիծվի, ով վատ բաներ է մտածում»,—ասում է ֆրանսիական առածը։ Յամենայն դէպս rendez-vous-ներ է տալիս սարերում։

Այս սիրոյ ամբողջ անճոռնիութիւնը, անբնականութիւնը, ոչ-րէալ էվօլիւցիան, Հմայեակի ողորմելի, բայց և անհասկանալի հոգեբանութիւնը, կառուցած, ըստ տեմպերամենտի անզուսպ, խելքով շատ խեղճ Սամսոնի աննօրմալ վերաբերմունքը դէպի այդ սէրը, մանաւանդ վերջնական պահի մօմենտում, գիտնականօրէն, ռելիեֆ կերպով մատնանշում է բժ. Աղասարեանը «Մշակի» № 19-ում։ Ուստի մեզ աւելորդ է կրկնել այստեղ, որ հոգեբանութիւնը բացակայում է պիէսի մէջ։ Բայց ամենից շատ հարուածում է ընթերցողին ծնողական զգացմունքի կատարեալ բացակայութիւնը թէ Արմենուհու և թէ Հմայեակի սրտում։

Ի զուր չէին վրդովված ներկայացման եղած կանայք։ Հեղինակը պէտք է հասկանայ, որ ծնողական զգացմունքի հետ խաղալ չէ կարելի։ Այդ էլ հօ անապաշտութիւն չէ. այդ բնական, զօօլօգիական զգացմունք է, զօրեղ, ամեն ինչ խեղդող, վառօդի պէս բռնկվող, մի սոսկ բնազդային, անսանձական զգացմունք։ Եւ անհաւատալի ու հրէշաւոր կարծիք է այն ենթադրութիւնը, թէ մայրը կամ հայրը «համոզմունքով» կարող են թողնել իրանց զաւակին տափական կամ իդէալական սիրոյ համար, կամ դաշնամուր ազատօրէն ածելու համար։ Կարդացէք Հմայեակի սոփեստութիւնները (գործ. 4, տեսիլ X) և անտրամաբան դատողութիւնները, որոնց խախուտ հիման վրա նա այնքան սառնարիւնութեամբ բարձի թողի է անում իր երկու զաւակներին։ Գոնէ մտածէր, թէ զաւակները պիտի մնան մի կնոջ ձեռքին, որին նա դև է անուանում։ Իսկ Արմենուհու թոյլ տատանումները վերջնականապէս կտրվում են, երբ սատանայ Հմայեակը պաթօսով յայտնում է, թէ «երբ կամենաք, որքան կամենաք և ինչ կամենաք»—կարող էք նուագել։ Այս հեռանկարը բաւական է, որ մի մարդ թողնի իր ամուսնուն, որին սիրում է, իր երեխային, որին բնականօրէն պիտի սիրի (թէև պիէսի մէջ չէ երևում) և գնայ կիսածանօթ մարդու ետևից (!??)։

Այդ մանկական հոգեբանութիւնը ուղղակի ապշեցնում է մեզ։ Երկու տարեկան մանուկներին կարելի է այդպէս խաբել, թէ «այդ թողը, լաւը չէ. ես քեզ համար մի մեծ տիկին կառնեմ»։

Մի քանի բացեր սակայն պէտք է նկատի առնել։ Յայտնի չէ՝ թէ Արմենուհին սիրահարված է ամուսնացել Սամսոնի հետ, թէ նրա հարստութիւնով գրաւված։ Յայտնի չէ, թէ Սամսոնը ինչ կրթութեան տէր մարդ է, որևէ բան սովորել է, թէ վայրենու մէկն է։ Յայտնի չէ, թէ Սիրանոյշը ինչու է Հմայեակին գնացել, եթէ չէր սիրում, որովհետև այդքան խորամանկ աղջիկը չէր կարող յափշտակվել մի «ոչ տգեղ երիտասարդով, առողջ, կայտառ, որը փայլուն ապագայ էր խոստանում»։ Եւ տասնեակ այդպիսի բացեր։

Այսպիսով հիմնական դօգմը ոչ լուսաբանված ենք տեսնում, ոչ պատճառաբանված։ Տեսանք՝ որ Արմենուհին մի որոշ հասկանալի մօտիվ չունի իր ընտանիքը թողնելու։ Չը կայ նոյնիսկ այն տարերական սէրը դէպի Հմայեակը,—սէր, որի ազդեցութեան ներքոյ մարդ նոյնիսկ ինքնասպանութիւն է գործում։

Մնում են կողմնակի մօտիվները։ Տնեցի կանանց հալածանքները և դաշնամուր ածելու ազատութեան խանգարվելը։ Այս երկու դրդիչ պատճառներն են մնում։ Բայց այդպիսի խղճուկ խոչընդոտները մի վայրկեանում կարելի է հեռացնել, և Սամսոնն այդ պիտի անէր, պիտի հեռացնէր իր մօրն ու քրոջը, պիտի բանար դաշնամուրը։ Էլ ինչ մնաց...

Առհասարակ հեղինակը լաւ ծանօթ չէ բուրժուա կեանքին։ Գոնէ այսօր այդպիսի ընտանիքները, ինչպէս են Սամսոնի ազգականները, չքացել են բուրժուական հորիզոնից։ Դա անախրօնիզմ է։ Ոչ մի հարուստ մարդ իր կնոջ չի դցի իր բիրտ ազգականների ճանկը, որ օր ու գիշեր ծաղրեն նրան և զրկեն նոյնիսկ դաշնամուր ածելու հաճոյքից։ Ի՞նչ հարկ կայ այդ տեսակ անբնական միջավայրեր ստեղծել։ Ստեղծված է նրա համար, որ Արմենուհին մի պատճառ ունենայ դժգոհելու իր դրութիւնից։ Բայց ինչպէս տեսանք, դա մի չափազանց թոյլ մօտիվ է։ Եւ վերջացաւ թէ չէ, դառնում է փոթորիկ մի գաւաթ ջրում։

Պիէսի մէջ աչքի է ընկնում նաև որոշ սալօնական [illegible] խանգարումն։ Օրինակ, երբ մէկը իր կնոջը ծանօթացնում է մի պատանու հետ, դառնում է տիկնոջը՝ «Թոյլ տուր ներկայացնել քեզ այս ինչին»։ Իսկ պիէսի մէջ Սամսոնը դառնում է Հմայեակին՝ «Իմ կինն է, իմ մայրը, իմ քոյրը»։

Յետոյ մեծ անքաղաքավարութիւն է, երբ տանտիկինը մեկուսացել է և նուաստացնում է, ներս մանել ու մինչև անգամ նստել ու լսել։ Այդպիսի հակաբեմական անճշտութիւնները խանգարում են տպաւորութիւնը։ Առհասարակ գործող անձերի растасовкаն բեմական չէ։

Շատ պիտի խանգարեն նաև լեզուի անճշտութիւնները։ Օր. «ճակատագիր» գործ է ածվում կարծես «բաղդ» բառի փոխարէն, «գաղափար»—«իդէալ»-ի փոխարէն։ Դրանք տարբեր բաներ են։ «Կոկորդի վրա մի քորոց»։ «Վերադարձաւ խելագարված ձեր դաշնամուր նուագելուց», «անկրակ գոյութիւն», «ես չեմ կարող լինել մէկն այն հայրերից»։ «Ես թոյլ եմ տալիս ինձ հաւատալու»։ «Անվերջ սողալ բռնական կեանքի ձանձրոյթում», «հեռաւորութեան փշերը չեն, որ պիտի...», «մի կտրված ծառի չի կարելի մի ուրիշ բանի վրա հաստատել»։ Յետոյ մի ռուսական դարձուածք ունի, որը չէ սազում մեր լեզուին և դէմ է ժողովրդի բարբառին։ Մենք չենք ասում «տալիս էք խօսք», այլ «խօսք տալիս էք». չենք ասում «ունես իրաւունք», այլ «իրաւունք ունես»։ Առանց այն էլ մեր լեզուն օտար դարձուածքներով լիքն է, գոնէ դրամատուրգները հայերէն գրեն։ Յետոյ տարօրինակ են հնչում «քով, վասն զի» ոչ գործածական բառերը։ Առհասարակ պիէսի լեզուն պէտք է խօսակցական լեզու լինի, պէտք է մշակել այդ լեզուն։

Յօդուածս չափազանց երկարեց։ Աւելորդ է խօսել միւս գործող անձերի մասին, որոնք շատ թոյլ և նոյնպէս անբնական շտրիխներով են ուրուագծված, իսկ մի քանիսը, օրինակ ուսուցիչը, ծառան, նոյն իսկ բժիշկը միանգամայն աւելորդ տեղ են բռնում։

Ինչ ասել եմ Շիրվանզադէի «Եւգինէ» պիէսի առիթով մի քանի տարի առաջ խօսելիս, նոյնը պիտի կրկնեմ ներկայ պիէսի մասին. Շիրվանզադէին հոգեբանական և իդէական պիէսները չեն աջողվում։ Զօռով դրամա գրել չէ կարելի, ինչպէս զօռով ճարտարապետ կամ հիպնօտիզեօր դառնալ չի լինի. այդպիսի պիէսները կեանք չունեն. նրանք mort-né են, որքան էլ աշխատենք բեմ դուրս բերել նրանց։

Փելիքս

շուտով տեսնել իրան՝ իր մինիմալ հողամասին սեփական տէր դարձած։ Ցանկալի էր, որ «Մշակում», որի էջերում այդ առարկայի վերաբերեալ յիշատակվել էր մի անգամ մխիթարական տեղեկութիւն, հաղորդվէին նորագոյն մանրամասնութիւններ։

Գիւղական ժողովուրդը իր աչքերը դարձրած ունի դէպի հեռու արքայանիստ մայրաքաղաքը, դէպի Տաւրիկեան Պալատը, Ռուսաստանի պարլամենտը և անհամբեր սպասում է այդ հարցի շուտ լուծման հետևանքին։ Նա վստահօրէն յոյս է տածում, որ Պետական Դումայի յարգելի անդամները, պատգամաւորները, որոնց շլինքին է բարձված ժողովրդի ծով կարիքները, հոգսերը, կը փութացնեն այդ հարցի լուծումը և որ գլխաւորն է կը նշանակեն ջրովի ու անջրդի հողերի գները ամենայն արդարութեամբ, որպէսզի հեշտութեամբ կատարվի հողերի յետ գնումը։

Բ. Զաքարեանց

Վերին-Շէն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ապրիլի 14-ին, Կովկասի Փոխարքային ներկայացաւ քաղաքագլուխ Ալ. Խատիսեան։

◆ Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձուն, «Кав.»-ի ասելով, ժանտախտի դէմ կռւելու մասին աւելի շատ տեղեկութիւններ տարածելու նպատակով հրահանգագրեց Կովկասի կրթական հաստատութիւնների կառավարիչներին՝ առաջարկել կրթական հաստատութիւնների բժիշկներին կազմել ապրիլի 20-ին այսպէս կոչված թոքախտային օր, կարդալ կանոններ այդ հիւանդութեան դէմ մաքառելու մասին։

◆ Ինժեներ Վուրցէլը մեկնեց դիտելու Արմաւիր-Տուապսէ նորակառոյց երկաթուղագծի աշխատանքները։

◆ Ազգաբնակութեան մէջ ձրիաբար տարածվում են բրօշիւրներ ռուսերէն և վրացերէն ֆիլօկսէրայի դէմ կռւելու միջոցների մասին։ Բայց թէ ինչու կովկասեան ֆիլօկսէրային կոմիտէն չէ բարեհաճել այդ անհրաժեշտ բրօշիւրներից տպել նաև հայերէն, մնում է գաղտնիք, մանաւանդ որ ֆիլօկսէրայով վարակված շատ այգիներ կան Երևանի, Գանձակի և Բագուի նահանգներում։

◆ Այսօր, Թիֆլիզի հասարակական կլուբում (Բօրսայի դահլիճ), Մ. Անդրէեվը և Ա. Սատախօվան կը կարդան ռեֆերատ ինքնասպանութեան, նրա սօցիալական և անհատական պատճառների մասին և նրա դէմ կռւելու միջոցների մասին (փոփոխութիւն արտաքին պայմանների, փոփոխութիւն կրթութեան մեթօդների և այլն)։ Ռեֆերենտները կօգտվեն, ի միջի այլոց, Իւշկեվիչի «Miserere» դրամայից։ Ռեֆերատից յետոյ կը կայանայ զրոյց։

◆ Այսօր տեղի կունենայ Թիֆլիսի դումայի իրաւասուների ժողովը, ուր Ալ. Խատիսեան կը պատմէ իր ճանապարհորդութեան հետևանքների մասին։

◆ Ամսիս 18-ից Անդրկովկասեան երկաթուղագծերում մտցվում է ամառային երթևեկութիւն, որի ցանկը ընթերցողը կարող է կարդալ ներկայ №-ի տեղեկատուի բաժնում։

◆ Երէկ Թիֆլիսում սկսեց հրատարակվել ռուսերէն մի նոր թերթ՝ «Трудовая Копѣйка» վերնագրով, որի խմբագիր-հրատարակիչն է Բեզվակ։ Այդ համարի մէջ տպված է մի յօդուած «Հայկական մամուլից» վերնագրով, Շիրվանզադէի առաջիկայ յօբելեանի մասին։

◆ Ապրիլի 24-ին, ժողովրդական համալսարանի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում կընտրվի նոր վարչութիւն։

◆ Մանր վարկի հաստատութիւններ բացվեցին Թիֆլիսի գաւ. Գլդան և Լօլօ գիւղերում, Դուշէթի գ. Մցխէթ, Օգլիսի և Մուխրանի գիւղերում, Գօրու գ. Քվէմօ Աւճալա և Մէջվրիսխեվի գիւղերում, Սղնախի գ. Բեմէչուղի, Վաքիրի, Բակուրցիխէ, Գուրջիանի և Վելիսցիխէյի գիւղերում։

◆ «Зак. Рѣчь» օրաթերթը հաղորդում է մի խակական սենսացիօն լուր. «Թիֆլիսում ապրող Համբարձում Մելիքեան «Հորիզոն» լրագրի խմբագրութեանը՝ հրատարակութիւնը բարելաւելու համար՝ նուիրել է 50,000 րուբլի»։ Եթէ այս լուրը տպվէր ապրիլի 1-ին, էլի հասկանալի կը լինէր. սակայն՝ թարսինման՝ Մ. Զմշկեանի օրացոյցն ասում է, որ ապրիլի 15-ի երազը սուտ է...

◆ Վրաց «Ախալի Սաքմէ» լրագրի խմբագիր Ջավախէն պատասխանատւութեան է ենթարկվում քր. պատժ. 132-դ յօդուածով։

◆ Սուրամում այս ամառ բացվելու է սանատորիա։

◆ Այսօր Աւճալեան աուդիտօրիայում կը լինի ձրի համերգ։

◆ Ապրիլի 17-ին Բագւում տեղի կունենայ երկրորդ երեկոյթ, նուիրված Խ. Աբովեանի յիշատակին։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարում սպրդել է մի սխալ։ «Ներքին լուրերի» բաժնում, Թիֆլիսի Մուխրանեան կամուրջի մասին հաղորդված տեղեկութեան մէջ տպված է «Կովկասի Փոխարքան. հնարաւոր գտաւ բաւարարութիւն տալ», պէտք է լինի «հնարաւոր չը գտաւ»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Кривое Зеркало»-ն շարունակում է Արտիստական թատրօն գրաւել ամէն օր հոծ հասարակութիւն։

Արդարև նրա աջողութիւնը անհերքելի է դառնում, երբ բեմի վրա նա ներկայացնում է կեանքը իր վարագուրված կողմերով ի տես և ի խրատ բոլոր նրանց, որոնք կեանքի մասին կազմած ունեն սոսկ միակողմանի արտաքին հայեացք և հասկացողութիւն, բոլոր նրանց, որոնք կեանքի իմաստը տեսնել են ձգտում չափազանցութիւնների և անտեղի վայելքների ու սիրահարութեան մէջ...

Այդպիսով ներկայացվող դէպքերը ամբողջանում են առողջ սատիրով ու հումօրով, որոնք դիտողի վրա վերջում թողնում են իմաստալի տպաւորութիւն։

Չենք կարող առանձնապէս չը շեշտել հայազգի երգչուհի օր. Աբրահամեանի մշտական աջողութեան վրա։ Օրիորդը ունի մշակված և գեղեցիկ soprano, որ հասած է կատարեալ պարզութեան։ Նրա երգած ռոմանսները միշտ թողնում են հաճելի տպաւորութիւն լսողների վրա։

Խմբի վերջին ներկայացումը տեղի կունենայ վաղը։ Ե.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը վարչական կարգով Ռուսաստանում խմբագիրների վրա դրված է 33 դրամական տուգանքներ՝ 7,675 րուբլու։

◆ Պետերբուրգի լայն խաւերում խօսում են, որ Պետ. Դուման կարձակվի մայիսի 20-ին ամառային արձակուրդների համար։ Այդպէս շուտ արձակելը բացատրվում է նրանով, որ կառավարութիւնը պատրաստվում է եռանդով մտնել ընտրողական պայքարի մէջ։

◆ Հրաժարական է տալիս ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական Գեօրգեվսկին։ Նրա յաջորդ համարվում է Մոսկվայի պրօֆեսոր Տաուբէն։

◆ Պետերբուրգի արքունական պալատի արխիվում գտնվեց մի գործ, որի համաձայն փոխարինաբար 20,000 րուբլի էր տրվելու Պուշկինին «Պուգաչեվեան ապստամբութիւն» գրքի հրատարակութեան համար։

◆ «Новое Время»-ն հաղորդում է, որ Զատկի գիշերը կալանաւորվել է Կրօնշտադտում սօց.-յեղափոխական զինուորական միութիւնը 18 մարդուց բաղկացած։

◆ Էսպերանտիստների լիգայի մէջ Պետերբուրգում կատարվեցին խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։

◆ Զինուորական մինիստր Սուխոմլինօվը շաբաթ օրը մեկնում է Հեռաւոր Արևելք։

◆ Պետերբուրգից—Մոսկվա թռչելու համար, հինգ ժամվայ ընթացքում, նշանակված է մրցանակ 75,000 րուբլի։

◆ Այս օրերս ֆրանսիացի 24 տարեկան օդագնաց Պիէր Պրիէն 4 ժամվայ մէջ, առանց դադարի, թռաւ Լօնդօնից—Պարիզ և այդպիսով հաստատեց նոր մրցակէտ անդադար թռչելու համար։

◆ Երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտի անդամներից շատերը պահանջում են Ջէվադ և Թալէաթ-բէյ մինիստրներից հրաժարվել։

◆ Լուրերին նայած, օտարադաւանների շարժմանը մասնակցել է նաև Թիւրքաց գահաժառանգը։

◆ Ստոլիպինի մօտ տեղի ունեցաւ կարևոր խորհրդակցութիւն չինական հարցի առթիւ։

◆ Գուչկովի կարծիքով, Հեռաւոր Արևելքի բարդութիւններն անխուսափելի են։ Աշնան նստաշրջանին Դուման զբաղվելու է Արևելքի հարցերով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

14 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Եկան բօլգար գիմնազիստ էկսկուրսանտները, որոնք Ազատարար Թագաւորի գերեզմանի վրա հոգեհանգիստ կատարել տուին և պսակ դրին։

Մահմեդական ուխտաւորներին Հէջաս ծովային ճանապարհով ուղարկելու համար ներքին գործերի մինիստրը 1911 թ. նշանակեց Օդեսսա, Սեվաստոպօլ, Թէոդոսիա և Բաթում նաւահանգիստները։

ԿԻԵՎ։ Այրվեց հրէական հիւանդանոցը։

Կալուածատիրուհի Շեգէլսկայան 15,000 րուբլի նուիրեց նահանգական զեմստվային ժողովրդական դպրոց հիմնելու։

ՄՕՍԿՎԱ։ Պետական Դումայի անդամ Գիժիցկիի նախագահութեամբ բացվեց սօկօլների համառուսական համագումարը։

Բացվեց գործարանային բժիշկների համառուսական համագումարը։ Ներկայ էին 200 պատգամաւորներ։

Բացվեց կէլինայի նուիրած 240,000 ր. գումարով քաղաքային երեխաների այգին։

Ոստիկանութիւնը երևան հանեց մի խումբ մարդկանց, որոնք ուզում էին կուսակցական խնդիրներ անցկացնել գործարանային բժիշկների համագումարին։

ՌԻԳԱ։ Ծովային փոթորիկ է։

ՍՕՍՆՕՎԻՑԻ։ Ցինդէլի գործարանում գազից թունաւորվեցին մէկ ինժեներ և 7 բանւորներ, որոնցից 4-ը մեռան։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Երկու գնացքների ընդհարման ժամանակ 23 վագոններ ջարդվեցին, 6 մարդ վնասվեցին։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Բացվեց Կուբանի շրջանի բժիշկների առաջին համագումարը։

ԿԻԵՎ։ Դնէպրի վարարումը ստանում է սպառնական կերպարանք։ Մի շարք գիւղեր ջրի տակն են մնացել։ Ջուրը շարունակում է աւելանալ։

ԹԱՒՐԻԶ։ Ռուսահպատակ Ռաբինօվիչը բացեց եւրօպական առաջին դեղատունը, որ կարգաւորված է ռուսական ձևով։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Արքայական օպերային թատրօնում թագաւորական ընտանիքի ներկայութեամբ մեծ աջողութեամբ կայացաւ «Բօրիս Գօդունօվի» առաջին ներկայացումը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի քանի ժամանակից ի վեր Տ. Նազարեանը սաստիկ անհանգստութիւն է սկսել պատճառել «Հորիզոնի» մարդկանց։ Հէնց որ մի որևէ լուր է լինում տպված նրա մասին՝ «Մշակի» կամ «Տարազի» մէջ, «Հորիզոնը» սկսում է մասխարութիւններ անել։ Իսկ իր արած խակական մասխարութիւնները, ի հարկէ, չէ նկատում։ Օրինակ նա շատ լուրջ կերպով յայտնում է, որ «Հորիզոնը» հայերի մէջ ամենատարածված թերթն է։ Մասխարականները կարծում են, որ եթէ մի լրագիր տպեն աւելի շատ թւով, քան բաժանորդներ ունի, և ապա պուդերով ծախեն, ուրեմն դա կը նշանակէ «ամենից շատ բաժանորդ» ունենալ. կամ ուռուցիկ լուրեր տարածեն, ընկած ֆոնդերը բարձրացնելու համար, թէ այս կամ այն կապիտալիստը յանկարծ վեր է կացել և մեծ գումար նուիրել «Հորիզոնին», հայ հասարակութիւնն էլ խելօք կը հաւատայ։ Այդպիսի մի բաղ էլ բաց էր թողված, իբրև փորձ, ռուս թերթերում Հ. Մելիքեանի մասին։ Մենք կասենք՝ «Աստուած բարի վայելումն տայ». միայն ինչու միստիֆիկացիայի օբեկտ պէտք է դառնայ խեղճ «Закавк. Рѣчь» թերթը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 գնացքը՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր.., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պօստատար № 4 գնացքը՝** 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 3 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար № 6 գնացքը՝** 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում՝ 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը՝** IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր., Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № 74/75՝ 1 ժ. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու): Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ: **Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը՝** 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից գէնը այլևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ արագ. № 1 գնացքը՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ: **Պօստատար № 3 գնացքը՝** 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար № 5 գնացքը** 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր. երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան:

ԲՕՐԺՕՄ՝ մարդատար № 7/8 գնացքը՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար № 9/10 գնացքը՝** 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ մարդատար № 5 գնացքը՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.: **Պօստատար № 3 գնացքը՝** 9 ժ. 52 ր. առ.: **Արագ № 1 գնացքը՝** 10 ժ. 24 ր. երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № 72/73 գնացքը՝ 7 ժ. 38 առաւօտ.: **Մարդատար-ապրանքատար № 80/81 գնացքը՝** 1 ժ. 26 ր. ցերեկվայ:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան: **Պօստատար № 4 գնացքը՝** 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար № 6 գնացքը՝** 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ:

ԲՕՐԺՕՄԻՑ՝ Մարդատար № 9/10 գնացքը՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար № 7/8 գնացքը՝** 7 ժ. 18 ր. առաւօտեան:

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագոնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռօստով, միայն վճարելով պլացկարտի գինը:

Մայիսի 15-ից սահմանվելու է արագ գնացքներում անմիջական հաղորդակցութիւն առանց վագոն փոխելու Թիֆլիս-Բագու-Կիսլօվօդսկ միայն **միխտ** վագօնով (I և II կարգի):

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։

Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։

Ընդունելութիւնը { առաւ. ժ. 9—11.
երեկ. ժ. 5—7.

Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.

(օ. մ.) 1179. 100—86

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՎԱՇԷՆԻ"

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՍԱՊՕՆ ցանկացող ԵՐԵՒԱՆԻ ու ԳԱՆՁԱԿԻ նահանգների և ԿԱՐՍԻ շրջանի վաճառականները պէտք է դիմեն այդ նահանգների միակ ներկայացուցչին հետևեալ մշտական հասցէով. Эчміадзинъ. Араму Дадіанъ.

(օ. մ.) 369. 3—1

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՏՆԵՐ Գօլովինսկի պր. վրա, Գրիբօեդօվսկայա, Միխայլօվսկայա, Նիկօլայեվսկայա, Դիդուբէյսկայա և այլ փողոցների վրա:

ԽԱՆՈՒԹՆԵՐ տօնավաճառում (եարմարկա) և Մետեխսկի նրբափողոցում:

ՀԻՒՐԱՆՈՑ Արսաթումանում, սեփ. գետնի վրա:

Բոլոր շինութիւնները քարաշէն են և եկամուտ են բերում: Դիմել «Օրիանտ» հիւրանոցը № 11, առ. ժ. 9—12-ը:

(օ. մ.) 309. 9—7

PEPTONATE de FER
ROBIN

ԵՐԿԱԹԱՅԻՆ ՊԷՊՏՕՆԱՏ
ՌՕԲԷՆ'Ի



Իսկական երկաթային աղ, հեշտ ընդունելի, որ պատրաստել է Պ. ՌՕԲԷՆԸ

Ռօբէն'ի Երկաթը արագ ներգործում է ՍԱԿԱՒԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ԴԵՂՆԱԽՏԻ և բոլոր թուլութիւնների դէմ։

Տալիս է ախորժ

եւ երբէք կապութիւն չէ առաջացնում։

ԱՑԴ ԴԵՂԸ ՈՉ ՄԻ ՀԱՄ ՉՈՒՆԻ։

Ընդունվում է օրական երկու անգամ՝ 10-ից մինչև 30 կաթիլ, ուտելու ժամանակ, ջրի կամ գինու մի փոքր քանակութեան մէջ։

Իւրաքանչիւր սրուակը բաւականանում է 3 շաբաթ կամ 1 ամիս։

Վաճառվում է դեղատներում եւ ամենալաւ խանութներում։

Պահանջեցէք փաբր. դրոշմը «ՌՈԻՒՆ» և գործարանատիրոջ անունը ՌՕԲԷՆ։ Խուսափեցէք անպէտք կեղծիքներից։

(2.) (М. 152675) 333. 12—1

ՄՆԱՅՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. XXX-ամեակի

«ՏԱՐԱԶԻ» մի փայլուն ալբոմ-ախ՝ նուիրված Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ., Նրա XXX-ամեակի առիթով, լոյս կը տեսնի մայիսի վերջին։ Կը բովանդակէ ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ իր բոլոր ճիւղերով պատկերազարդ էութիւնը։

Այս հանդէսը մի ազգագրական-տեղագրական է՝ լինելու պճնազարդված Ընկ. շուրջ XXX տարվայ ընթացքում գործիչների պատկերներով։

Բոլոր ճիւղերը Կենտրոնի հետ շաղկապված կը լինեն դիւթական լարերով։

Հսկայական այս գործի մի մասը կատարվում է արտասահմանում։ Բազմաբովանդակ յօդուածները հիւսվում են մեր առաջնակարգ, գործին և պատմութեան լաւատեղեակ պերճ գրիչներով ու կընծայաբերվեն հայութեան՝ յօբելեանի օրը։

Բաժանորդագինը 2 ր., մինչև մայիսի մէկը Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկ. բոլոր անդամների համար (թէ Թիֆլիսի և թէ ճիւղերի) 1 ր. 50 կ.: Մայիսի մէկից յետոյ անխտիր ամենքի համար հատը 3 ր.։

Փղոսկրեայ թղթի վրա (սահմանափակ օրինակներ) հատը 25 ր.։

Վերադիր վճարով և պատուէրներ առանց բաժանորդավճարի չեն կատարվում։

Դիմել՝ Тифлисъ, Редакція «ТАРАЗЪ».

(ե. հ. շ.) 30. 20—4

ՀԻՊՆՈՏԻԶՄԻ

ԹՂԹԱԿՑԱԿԱՆ ԿՈՒՐՍ

Հիպնոտիզմը սահմանված է լինել ամենաուժեղ միջնորդը բուժական կրթական և բարենորոգչական զարգացման մէջ: Որ հիպնոզական երևոյթը գոյութիւն ունի և որ ամեն ոք ենթարկվում է այդ բնական ոյժի ազդեցութեանը, այլ ևս կասկած չի վերցնում: Հիպնոտիզմի կարևորութիւնը ընդունված է բոլոր նրանցից, որոնք ուսումնասիրած են այս գիտութիւնը: Հիպնոտիզմի հակառակ խօսում են միայն նրանք, որոնք սխալ են ըմբռնած ներշնչման օրէնքը:

Ներշնչման սկզբունքի մէջ է գտնվում աջողութեան և առողջութեան ուղիղ ոյժի-մուտքը:

ՍՈՎՈՐԵՑԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ. ՍՈՎՈՐԵՑԷՔ ՆԵՐՇՆՉԵԼ:

Հիւանդութիւնը անբնական է. սովորեցէք զարմանել ձեզ ձեր հիւանդութիւններից ձեր սեփական հոգու զօրութիւնով:

Մտախորհուրդը ոյժ է. սովորեցէք ուղղել ձեր մտախորհուրդը յօգուտ ձեր առողջութեան, երջանկութեան և աջողութեան:

Մասնագէտ հիպնոտիստ Յարութիւն Շէքէրջեանը պատրաստած է մի թղթակցական կուրս հայերէն լեզուով հայերի համար: Այս կուրսը պարզ և հասկանալի լեզուով պարզում և բացատրում է հիպնոտիզմի և մտքի ոյժի երևոյթը, և սիստէմի վերածված դասերով սովորեցնում է ընթերցողին այս «խորհրդաւոր» գիտութեան բոլոր գաղտնիքները:

Հիպնոտիզմ կարող է սովորել ամեն ոք:

Հիպնոտիզմի կուրսի արժէքի և այլ մանրամասնութիւնների համար պիտի ուղարկել 10 կոպէկի նամականիշ և ստանալ նոյն հեղինակի «Ինչպէս հիպնօտացնել» գրքոյկը:

Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago Ill. U. S. A.

(ե. շ.) 689. 100—83

ԴՈՒՔ ԾԱՆՕ՞Թ ԷՔ

բօրսային օպերացիաների հետ:

ԴՈՒՔ ԳԻՏԷ՞Ք

որ հարուստների ֆինանսական բարեկեցութիւնը ստեղծել է բօրսան:

ՁԵԶ ՅԱՅՏՆԻ՞ Է

որ ներկայ մոմէնտը միանգամայն բարեյաջող է բօրսային օպերացիաների համար՝ ֆօնդերով և դիվիդենտային արժէթղթերով, գլխաւորաբար վերջիններով, ինչու որ երկրի տնտեսական կեանքի առաջադիմող բարելաւութիւնը և արդիւնաբերութեան ու առևտրի զարգացումը անխուսափելիօրէն ազդում են արժէթղթերի գների բարձրացման վրա:

ԴՈՒՔ ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԷՔ

ծանօթանալ բօրսային շահագործման տեխնիկայի հետ և պարզել ձեզ համար, թէ ինչպէս Րօտշիլդները և դրամագլխի այլ թագաւորները բօրսայի միջոցով ձեռք են բերել իրանց հարստութիւնները և թէ ինչպէս այժմ հարստութիւն են դիզում նոյն միջոցով սովորական մահկանացուները:

Պահանջեցէք բոլոր գրավաճառանոցներում, քիօսկերում եւ երկաթուղային կայարաններում ՀԵՏԵՒԵԱԼ ԳԻՐՔԸ՝

ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԻՆ՝

„ПУТЬ КЪ БОГАТСТВУ"

= ԲՕՐՍԱՅԻՆ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐ =

Գինը 50 կոպէկ։

Հրատարակութեան պահեստը. С.-Петербургъ, Разъѣзжая ул., д. № 5, СПБ. Николаевская артель.

Փողերը կարելի է ուղարկել պօստային մարկաներով։

— ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԶԵՂՉ. —

(2, 16) (П. 24883) 105. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.